

ՊՕՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ  
ԾԱՌԱՅ ԾԱՌԱՅԻՑ ԱՍՏՈՒԾՈՅ  
ԵՒ ՀԱՐՔ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՅՆ  
Ի ՅԻՇԱՏԱԿ ՅԱԻԵՐԺՈՒԹԵԱՆ

## ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒՄԻ ՄԱՍԻՆ «ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎԸ»

Նախաբան

1. Տիեզերական ժողովիս մտադրությունն է հաւատացեալներուն քրիստոնէայ կեանքը օրէ օր զարգացնել, փոփոխութեան ենթակայ հաստատութիւնները ժամանակիս պահանջներուն հետ աւելի յարմարցնել, հրահրել ինչ որ կրնայ նպաստել Քրիստոսի հաւատացողներուն միութեան եւ զօրացնել ինչ որ կը նպաստէ բոլոր մարդոց համախմբումին Եկեղեցւոյ ծոցին մէջ. հետեւաբար Տիեզերական ժողովս կը համարի թէ իրեն կը վերաբերի յատուկ հանգամանքով հսկել նաեւ ծիսակատարումի բարեփոխման եւ յառաջդիմութեան:

*Ծիսակատարումը Եկեղեցւոյ խորհուրդին մէջ:*

2. Արդարեւ ծիսակատարումը, որուն միջոցով եւ յատկապէս Սուրբ Հաղորդութեան աստուածային զոհին մատուցումով «մեր փրկագործութիւնը կ'իրագործուի (1), գերազանց կեպով կը նպաստէ հաւատացեալներուն որպէսզի անոնք զայն ապրելով՝ ուրիշին ծանուցանեն եւ ցոյց տան Քրիստոսի խորհուրդը եւ ճշմարիտ Եկեղեցիին հարազատ էութիւնը: Արդարեւ Եկեղեցւոյ յատուկ է ըլլալ միանգամայն մարդկային եւ աստուածային, ըլլալ տեսանելի ու անտեսանելի իրողութիւններով հարուստ, եռանդուն՝ իր գործունէութիւններով, միանգամայն նուիրուած՝ հայեցողական կեանքին, այս աշխարհիս մէջ ամէն տեղ ներկայ բայց նաեւ ուղեւոր: Սակայն այնպիսի կերպով, որ իր մէջ ինչ որ մարդկային է՝ դասաւորուի ու ենթակայ ըլլայ աստուածայինին. տեսանելին՝ անտեսանելիին, գործունէութիւնը՝ հայեցողական կեանքին, ներկան՝ ապագայի ոստանին, որուն կը ձգտինք (2): Եւ քանի որ

ծիսակատարումը Եկեղեցիէն ներս գտնուողները օրէ օր կը դարձնէ Յիսուսին սուրբ տաճար եւ բնակարան Աստուծոյ՝ Հոգիով (3), որ ըլլան Քրիստոսի լիութեան համաչափ հասակով (4), ան զմայլելի կերպով կը զօրացնէ անոնց ուժն ու եռանդը Քրիստոսը հոչակելու: Այսպէս գործելով, ան, Եկեղեցիէն դուրս եղողներուն՝ զայն ցոյց կու տայ որպէս նշանը որ կը բարձրանայ ազգերուն վերեւ (5), որուն ներքեւ Աստուծոյ ցիրուցան զաւակները կը խմբուին (6), մինչեւ որ ըլլան մէկ հօտ եւ մէկ հովիւ (7):

*Սահմանադրութիւնը եւ զանազան ծէսեր:*

3. Այս պատճառով, Տիեզերական Ժողովն ծիսակատարումը զարգացնելու եւ վերանորոգելու համար, յարմար կը դատէ հետեւեալ սկզբունքները յիշեցնել եւ սահմանել գործնական չափանիշներ:

Այս սկզբունքներէն եւ չափանիշներէն մի քանին կրնան ու պէտք է գործադրուին ըլլա՛յ միւս ծէսերուն թէ հռոմէականին մէջ, նոյնիսկ եթէ անոնցմէ բխող գործնական չափանիշները միայն հռոմէականին յատուկ նկատուելու են, բացի եթէ անոնք իրենց եութեամբ իսկ, միւս ծէսերուն ալ կը վերաբերին:

*Գնահատանք՝ ճանչցուած ծէսերուն հանդէպ*

4. Հուսկ՝ Տիեզերական Ժողովն հաւատարմօրէն հնազանդելով Աւանդութեան, կը յայտարարէ, թէ մայրն մեր սուրբ Եկեղեցին օրինաւորապէս ճանչցուած բոլոր ծէսերը իրարու հաւասար կը նկատէ իրենց իրաւունքին եւ արժանապատուութեան մէջ եւ կը ցանկայ յետագային զանոնք բոլոր կերպերով պահպանել եւ նպաստաւորել, իսկ ուր որ կարիք կայ, կը մաղթէ զանոնք խոհեմաբար ամբողջութեամբ վերատեսել առողջ աւանդութեան մը ոգիով եւ անոնց հաղորդել նոր աշխուժութիւն՝ ներկայի պարագաներուն եւ պահանջներուն համաձայն:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒՄԻՆ  
ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ԵՒ ՅԱՌԱՋԻԱՂԱՅՔԻՆ

## Ա - Ծիսակատարումին բնոյթը եւ կարեւորութիւնը Եկեղեցոյ կեանքէն ներս

### *Քրիստոսի կատարած փրկագործութիւնը*

5. Աստուած «կ'ուզէ որ բոլոր մարդիկը փրկուին եւ հասնին ճշմարտութեան գիտութեան» (1 Տիմ 2, 4): Ան «անցեալին, քանիցս եւ զանազան կերպերով խօսած էր մեր հայրերուն, մարգարէներուն միջոցով» (Եբր 1, 1): Երբ հասաւ ժամանակներու լրումը, իր Որդին, մարմնացեալ եւ Սուրբ Հոգիէն օծեալ Բանը առաքեց աղքատներուն բարի լուրը աւետելու եւ բեկեալ սրտերը բուժելու համար (8), որպէս «մարմնի եւ հոգիի բժիշկ» (9), միջնորդ Աստուծոյ եւ մարդոց միջեւ (10): Որովհետեւ Բանին անձին միութեան մէջ անոր մարդկայնութիւնն է որ մեր փրկութեան գործիքն եղաւ: Այս պատճառով, Քրիստոսի մէջ «մեր հաշտութեան կատարեալ փրկագինը երեւցաւ եւ անով աստուածային պաշտամունքի լիութիւնը մուտք գործեց մեր մէջ» (11):

Մարդոց փրկութեան եւ Աստուծոյ կատարեալ փառաւորումի ծրագիրը, որոնց նախաքայլը եղած էին Աստուծոյ մեծագործութիւնները Հին Կտակարանի ժողովուրդին մօտ, Քրիստոս Տէրն մեր զայն իրագործեց յատկապէս իր երանաւետ չարչարանքներուն զատկական խորհուրդով, մեռելներուն մէջէն իր յարութեամբ եւ իր փառաւոր համբարձումով. զատկական խորհուրդ՝ ուր ան «մեռնելով, մեր մահը ոտնակոխեց եւ յանդիմանով՝ կեանքը վերանորոգեց» (12): Որովհետեւ խաչին վրայ տարածեալ Քրիստոսի կողէն է որ ծնունդ առաւ «հրաշալի սուրբ խորհուրդը ամբողջ Եկեղեցոյ» (13):

### *Փրկութեան ծրագիրը, շարունակուած Եկեղեցոյ կողմէ, կ'իրագործուի ծիսակատարումին մէջ:*

6. Ուստի, ինչպէս Քրիստոս Հօր կողմէ առաքուեցաւ, ինք եւս Սուրբ Հոգիով լիացած՝ իր Առաքեալները ուղարկեց, ո՛չ միայն որպէսզի Աւետարանը ամէն արարածի հոշակուի (14) եւ ծանուցուի թէ Աստուածորդին իր մահուամբ եւ յարութեամբ մեզ ազատեց սատանային զօրութենէն (15) եւ մեզ մահէն փոխադրեց Հօր Թագաւորութեան մէջ, այլ նաեւ որպէսզի անոնք եւս գործադրեն իրենց հոշակած փրկութեան ծրագիրը Պատարագին եւ խորհուրդներուն ընդմէջէն, որոնց շուրջ կը կեդրոնանայ ծիսական

կեանքը: Այսպէս է որ մարդիկ մկրտութեան շնորհիւ, կը պատուաստուին Քրիստոսի զատկական խորհուրդին՝ Քրիստոսի հետ մեռնելով ու թաղուելով, ապա անոր հետ նաեւ յարութիւն առնելով (16), անոնք կ'ընդունին որդեգրութեան հոգին «որով մենք կը գոչենք, Աբբա՛, Հայր (Հռոմ 8, 15), դառնալով այսպէս Հօր փնտռած ճշմարիտ աստուածապաշտներ (17): Նմանապէս, ամէն անգամ որ անոնք Տիրոջ Սեղանէն կը ճաշակեն, անոր մահը կ'աւետեն մինչեւ ան գայ (18): Ահա՛ թէ ինչո՛ւ Հոգեգալստեան օրն իսկ՝ երբ Եկեղեցին յայտնուեցաւ աշխարհին, «անոնք որ Պետրոսին խօսքը ընդունեցան, մկրտուեցան»: «Անոնք կը յարատեւէին Առաքեալներուն ուսուցումին մէջ, եղբայրական հաղորդութեան՝ հացի բեկանումին եւ աղօթքներուն ընթացքին,... զԱստուած բարեբանելով եւ ամբողջ ժողովուրդին համակրանքը շահելով» (Գործք 2, 41-47): Եկեղեցին չդադրեցաւ յետագային եւս համախմբուելէ, զատկական խորհուրդը տօնելու համար, Սուրբ Գիրքէն կարդալով ինչ որ իրենց կը վերաբերէր (Ղկ 24, 27), Հաղորդութիւնը մատակարարելով, որուն մէջ «ներկայ կը դառնան անոր յաղթանակն ու մահուան կրած պարտութիւնը» (19), միանգամայն գոհութիւն մատուցանելով «Աստուծոյ իր անասանելի տուրքին համար» (2 Կոր 9, 15) ի Քրիստոս Յիսուս՝ «իբր գովեստին եւ փառքին համար» (Եփ 1, 12), Սուրբ Հոգիի զօրութեամբ:

*Քրիստոսի ներկայութիւնը ծիսակատարումին մէջ*

7. Այսպիսի վսեմ գործի մը կատարումին համար՝ Քրիստոս միշտ իր Եկեղեցիին կողքին է, յատկապէս ծիսակատարումներուն պահուն: Ան ներկայ է պատարագի գոհին (20) եւ պատարագիչի անձին մէջ, «խաչին վրայ ինքզինք մատուցողը՝ այժմ նոյնը մատուցանելով քահանաներուն միջոցով» եւ գերագոյն չափով, հաղորդութեան տեսակներուն ներքեւ: Ան խորհուրդներուն մէջ ներկայ է իր զօրութեամբ, այնպէս որ երբ մէկը մկրտութիւն կատարէ, Քրիստոսն է մկրտողը (21): Քրիստոս ներկայ է իր խօսքով, որովհետեւ ի՛նքն է որ կը խօսի երբ Եկեղեցիին մէջ Սուրբ Գիրքը կը կարդացուի: Վերջապէս ան ներկայ է երբ Եկեղեցին կ'աղօթէ եւ կը սաղմոսերգէ, քանի որ խոստացաւ թէ «հոն ուր երկու կամ երեք հոգի իմ անունովս կը ժողովուրդին, եւ անոնց մէջ եմ» (Մատթ 18, 20): Արդարեւ զԱստուած մեծապէս փառաւորող, մարդիկն ալ սրբացնող՝ այդ մեծ արարքը կատարելու համար, Քրիստոս միշտ կ'ընկերակցի զինք իր Տէրը կոչող Եկեղեցիին՝ իր

սիրեցեալ Հարսին, որուն միջնորդութեամբ՝ Քրիստոս պաշտամունք կը մատուցանէ երկնաւոր Հօր:

Ուստի ամէն ծիսակատարում իրաւամբ նկատուած է Յիսուս Քրիստոսի քահանայական պաշտօնին իրագործումը, որուն ընթացքին մարդուն սրբացումը կը նշուի շօշափելի նշաններով եւ կ'իրագործուի անոնցմէ իւրաքանչիւրին յատուկ եղող ձեւով, որուն ընթացքին նաեւ հասարակաց ամբողջական պաշտամունք կը կատարուի Յիսուս Քրիստոսի խորհրդաւոր Մարմնին, այսինքն՝ անոր գլխուն եւ իր անդամներուն կողմէ:

Հետեւաբար, ամէն ծիսակատարում, որպէս արարք Քրիստոս քահանային եւ իր Մարմնին՝ Եկեղեցիին, կը հանդիսանայ գերազանցօրէն սրբազան արարք եւ Եկեղեցւոյ ո՛չ մէկ ուրիշ արարք կրնայ անոր հաւասարիլ իր հանգամանքով ու աստիճանով:

#### *Երկրաւոր եւ երկնաւոր ծիսակատարում*

8.Երկրաւոր ծիսակատարումին միջոցով՝ մենք որպէս նախաճաշակ՝ կը մասնակցինք Երուսաղէմի սուրբ աւանին մէջ տօնակատարուող երկնաւոր ծիսակատարումին, որուն մենք ուղեւորներս՝ կը ձգտինք, եւ ուր Քրիստոս կը բազմի Աստուծոյ աջակողմը՝ որպէս սրբավայրին եւ իսկական տաղաւարին պաշտօնակատար (22), եւ մենք համայն երկնային զօրաց հետ կ'երգենք Տիրոջ փառաց գովերգը: Յոյս ունինք, սուրբերուն յիշատակը մեծարելով՝ մաս կազմել անոնց հասարակութեան: Կը սպասենք Տէր Յիսուս Քրիստոսին որպէս մեր Փրկչին, մինչեւ որ Յիսուս որ մեր կեանքն է, մեզի անձամբ յայտնուի եւ այն ատեն մենք ալ իրեն հետ յայտնուինք փառքի մէջ (23):

#### *Ծիսակատարումը Եկեղեցւոյ միակ գործունէութիւնը չէ*

9.Ծիսակատարումը չի սպառեր Եկեղեցւոյ ամբողջ գործունէութիւնը, որովհետեւ մարդիկ, որպէսզի ծիսակատարումին մերձենան՝ հարկ է որ կանչուած ըլլան հաւատքի եւ դարձի. «Ինչպէ՞ս աղերսեն անոր՝ որուն չեն հաւատար, ինչպէ՞ս հաւատան եթէ զինք չեն ունկնդրեր: Իսկ ինչպէ՞ս ունկնդրեն զինք առանց քարոզողի եւ ինչպէ՞ս քարոզել առանց առաքուած ըլլալու» (Հռոմ 10, 14-15):

Այս պատճառով՝ Եկեղեցին ոչ-հաւատացեալ մարդոց կ'աւետե փրկութեան հռչակումը (Kerigme), որպէսզի ճանչնան միակ ճշմարիտ Աստուածը եւ անոր առաքած՝ Յիսուս Քրիստոսը, եւ ապաշխարելով, փոխեն իրենց վարքը (24): Եկեղեցին հաւատացեալներուն մշտապէս կը քարոզէ հաւատքն ու ապաշխարանքը, զանոնք կը տրամադրէ խորհուրդներուն, կ'ուսուցանէ պահել Քրիստոսի պատուիրածը (25), զիրենք կը մղէ բարեգործութեան, բարեպաշտութեան եւ առաքելութեան բոլոր գործերուն, որոնց միջոցով ան ցոյց կու տայ թէ քրիստոնէաները, նոյնիսկ եթէ այս աշխարհէս չեն, բայց աշխարհիս լո՛յսն են եւ Հայրը կը փառաբանեն մարդոց առջեւ:

*Ծիսակատարումը՝ գազաթնակէտ եւ աղբիւր Եկեղեցւոյ կեանքին*

10. Ծիսակատարումը կը հանդիսանայ այն գազաթնակէտը, որուն կը ձգտի Եկեղեցիին գործունէութիւնը: Ան միանգամայն աղբիւրն է ուսկից կը բխի անոր ամբողջ զօրութիւնը: Որովհետեւ առաքելական գործունէութիւնները կը ձգտին միատեղ խմբելու բոլոր անոնք որ իրենց հաւատքին եւ մկրտութեան շնորհիւ Աստուծոյ որդի դարձած են, ապա Եկեղեցիին ծոցին մէջ՝ զԱստուած գովաբանելու, զոհին մասնակցելու եւ Տիրոջ Ընթրիքէն ճաշելու:

Ծիսակատարումը իր հերթին կը մղէ «գատկական խորհուրդներով» յազեցած հաւատացեալները «մէկ սիրտ կազմելու բարեպաշտութեան մէջ» (26), կ'աղօթէ որ անոնք «իրենց կեանքին մէջ պահպանեն ինչ որ ընդունեցան հաւատքով» (27): Մարդոց հետ կնքուած եւ Հաղորդութեամբ վերանորոգուած Տիրոջ այս դաշինքը կը հրապուրէ եւ կը խանդավառէ հաւատացեալները Քրիստոսի հարկադրիչ սիրոյն հանդէպ: Հետեւաբար շնորհքը, ծիսակատարումին եւ յատկապէս Հաղորդութեան մէջէն՝ իբր աղբիւրէ մը մեր մէջ կը հոսի եւ այսպէս գերագոյն չափով կը ստացուի մարդոց սրբացումը եւ Աստուծոյ փառաւորումը ի Քրիստոս, որոնց կը ձգտին Եկեղեցւոյ միւս բոլոր գործերն ալ, որպէս իրենց վախճանին:

*Անձնական տրամադրութիւններուն անհրաժեշտութիւնը*

11. Բայց այս ամբողջական արդիւնքները ձեռք բերելու համար, հարկ է որ հաւատացեալները ծիսակատարումին մերձենան

ուղղամիտ տրամադրությամբ, իրենց հոգին ներդաշնակեն իրենց ձայնին հետ եւ գործակցին ի վերուստ տրուած շնորհքին, որպէս զի զայն զուր տեղ չստանան (28): Այս պատճառով՝ հոգեւոր հովիւները զգոյշ ըլլալու են որ ծիսակատարումին ընթացքին ո՛չ միայն անոր վաւեր եւ արտօնուած օրէնքները պահպանուին, այլ հաւատացեալներն ալ իրենց հերթին անոնց մասնակցին զիտակցաբար, գործօն եւ արդիւնաշատ կերպով:

#### *Ծիսակատարումը եւ անձնական աղօթքը*

12. Հոգեւոր կեանքը չի կայանար միայն ծիսակատարումներու մասնակցութեան մէջ, այլ քրիստոնէան՝ որքան ալ կանչուած ըլլայ հաւաքաբար աղօթելու, սակայն ան պէտք է նաեւ իր սենեակը մտնէ Հօր աղօթելու ի ծածուկ (29) եւ անդադար աղօթէ, ինչպէս կ'ուսուցանէ Առաքեալը (30): Ան կ'ուսուցանէ նաեւ մեր մարմիններուն մէջ կրել Յիսուսի մահացուցումը, որպէս զի Յիսուսի կեանքն ալ յայտնուի մեր մահկանացու մարմնին մէջ (31): Այս պատճառով՝ պատարագի ընթացքին Տիրոջմէ կը խնդրենք որ «հոգեւոր զոհի նուիրումը ընդունելէ ետք՝ մե՛զ ալ դարձնէ իրեն յաւերժական ընծայում մը» (32):

#### *Ծիսակատարումը եւ բարեպաշտական հրահանգները*

13. Եկեղեցւոյ օրէնքներուն եւ կարգադրութիւններուն հետ համաձայն եղող քրիստոնէայ ժողովուրդին «բարեպաշտութիւնները յոյժ յանձնարարելի են, մանաւանդ երբ կը կատարուին սուրբ Աթոռին հրամանով: Իւրայատուկ Եկեղեցիներուն «սրբազան արարողութիւնները» եւս արժանի են յատուկ յարգանքի երբ կը կատարուին եպիսկոպոսներուն յանձնարարութեամբ եւ ըստ վաւերացուած սովորոյթներու եւ զիրքերու:

Բայց այս արարողութիւնները կարգաւորուելու են ծիսական ժամանակակարգին համեմատ, միանգամայն դաշնաւորուելու են ծիսակատարումին հետ՝ որպէս անոնց շարունակութիւնը, անոնց աւելցնելով նաեւ ժողովուրդին մասնակցութիւնը, քանի ծիսակատարումը իր բնութեամբ՝ զերադաս է այս բոլորէն:

### **Բ. Որոնում ծիսական կազմաւորումին**

## **Եւ գործօն մասնակցութեան**

14. Մայր Եկեղեցին յոյժ կը ցանկայ որ բոլոր հաւատացեալները ուղղուն ծիսական տօնակատարումներուն լրիւ, խղճամիտ եւ գործօն մասնակցութեան: Ասիկա խնդրուած է նոյնինքն ծիսակատարումին էութենէն, ասիկա քրիստոնէայ ժողովուրդին նաեւ իրաւունքն ու պարտականութիւնն է իր մկրտութեան զօրութեամբ՝ որպէս «ցեղ ընտիր, թագաւորական քահանայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեփական» (1 Պետ 2, 9), (Հմմ. 2, 4-5):

Այս ծիսակատարումին վերանորոգումին եւ վերարժեւորումին մէջ՝ պէտք է բոլոր ուժերով իբր թիրախ առնել ամբողջ ժողովուրդին լրիւ ու գործօն մասնակցութիւնը, որովհետեւ ծիսակատարումը առաջին եւ անհրաժեշտ աղբիւրն է, որմէ հաւատացեալները պիտի կազմեն քրիստոնէայ հարազատ մտածելակերպ մը: Այս պատճառով՝ հովուական ամէն արարքին մէջ այս մասնակցութիւնը եռանդով հետապնդուելու է հոգեւոր հովիւներուն կողմէ, պահանջուած դաստիարակութեամբ հանդերձ:

Բայց այս արդիւնքին յանգելու ո՛չ մէկ յոյս կայ, եթէ հովիւները նախ իրենք խորապէս չեն համակուած ծիսակատարումին ոգիով եւ զօրութեամբ եւ եթէ իրենք եւս զայն ուսուցանելու ատակ չըլլան: Ուստի խիստ անհրաժեշտ է նախ եւ առաջ նախատեսել կղերին ծիսագիտական կազմաւորումը: Հետեւաբար Տիեզերական Ժողովս հետեւեալ կէտերը սահմանեց.

### *Ծիսագիտութեան դասատուները*

15. Դպրեվանքերուն, կրօնաւորական տուններուն եւ աստուածաբանական ամբիոններուն մէջ ծիսագիտութիւն դասաւանդող ուսուցիչները պէտք է իրենց պաշտօնը կատարելու պատշաճօրէն պատրաստուած ըլլան յատուկ կէդրոններու մէջ:

### *Ծէսին ուսուցումը*

16. Դպրեվանքերու եւ կրօնաւորական տուններուն մէջ ծիսագիտութեան ուսուցումը պէտք է դասուի անհրաժեշտ եւ առաջնահերթ նիւթերու շարքին, իսկ աստուածաբանական կէդրոններուն մէջ՝ զլիաւոր դասանիւթերուն կարգին եւ դասաւանդուելու է աստուածաբանական, պատմական,



միանգամայն հոգեւոր, հովուական եւ իրաւաբանական դիտանկիւնէն: Իսկ միւս դասընթացքներուն եւ յատկապէս դոկմատիկ աստուածաբանութեան, Սուրբ Գիրքի, հոգեւոր եւ հովուական աստուածաբանութեան դասատուները հոգ տանելու են որ իրենց դասաւանդած նիւթին ներքին պահանջքին համեմատ՝ շեշտեն Քրիստոսի խորհուրդը եւ փրկագործութեան պատմութիւնը ա՛յն կերպով որ այս դասանիւթերուն զօղը բացայայտ դառնայ ծիսագիտութեան եւ քահանայական կազմաւորումի հետ:

### *Ծիսական դաստիարակութիւն կղերիկոսներուն*

17. Դպրեվանքներուն եւ կրօնաւորական տուններուն կղերիկոսները տիրանալու են հոգեւոր կեանքի ծիսական կազմաւորումի մը՝ շնորհիւ սրբազան ծիսակատարութիւններուն ըմբռնումը ջամբող եւ անոնց ամբողջ հոգիով մասնակից դարձնող լաւ նախապատրաստութեան մը, ինչպէս նաեւ շնորհիւ սուրբ խորհուրդներուն եւ միւս ջերմեռանդական հրահանգներուն ծիսական խոր ոգիով կատարումին: Նմանապէս սորվելու են ծիսական կանոնները պահպանել ա՛յնպիսի ձեւով որ դպրեվանքներուն եւ կրօնաւորական տուններուն կեանքը խորապէս դրոշմուի ծիսագիտութեան ոգիով:

### *Օժանդակութիւն քահանաներուն*

18. Բոլոր յարմար միջոցներով օժանդակելու է նաեւ Տիրոջ այգիին մէջ արդէն գործող քահանաներուն ու կրօնաւորներուն, որպէսզի սրբազան պաշտօններով իրենց կատարածը միշտ աւելի խոր հասկնան, ծիսական կեանքով ապրին եւ զայն հաղորդեն իրենց յանձնուած հաւատացեալներուն:

### *Հաւատացեալներուն ծիսական կազմաւորումը*

19. Հոգեւոր հովիւները աշխուժօրէն եւ համբերութեամբ հետապնդելու են հաւատացեալներուն ծիսագիտական կազմաւորումը ու նաեւ անոնց ներքին եւ արտաքին գործօն մասնակցութիւնը իրենց տարիքին, կեանքի տեսակին ու պայմաններուն եւ իրենց հոգեւոր զարգացումին համեմատ: Անոնք այսպէս կատարած պիտի ըլլան Աստուծոյ խորհուրդներուն մատակարարի իրենց գլխաւոր պաշտօններէն մին ու այս մարզին

մէջ եւս իրենց հօտը պիտի առաջնորդեն ո՛չ միայն խօսքով, այլ նաեւ իրենց օրինակով:

*Հաստենդական միջոցները եւ ծիսակատարումը*

20. Սրբազան արարողութիւններուն եւ յատկապէս սուրբ Պատարագին ձայնասփիւռի, հեռատեսիլի միջոցով հաղորդասփռումները կատարուելու են զուսպ եւ յարգալից ոճով՝ այս պաշտօնին համար եպիսկոպոսներուն կողմէ նշանակուած մասնագէտ անձի մը առաջնորդութեամբ եւ երաշխաւորութեամբ:

**Գ. Սրբազան ծիսակատարումի վերանորոգումը**

21. Որպէսզի հաւատացեալ ժողովուրդը աւելի ապահով կերպով օգտուի ծիսակատարումին առատաբուխ շնորհքներէն, մեր Մայրը Սուրբ Եկեղեցին կ'ուզէ լրջօրէն աշխատիլ նոյնինքն ծիսակատարումին ընդհանուր վերանորոգումին համար: Ան կազմուած է աստուածային հաստատութիւն եղող անփոփոխ մէկ մասէն եւ փոփոխութեան ենթակայ միւս մասերէն, որոնք կրնան եւ պէ՛տք է ենթարկուին ժամանակի պատճառած փոփոխութեան եթէ անոնց մէջ թափանցած են ծիսակատարումին էութեան հետ անհաղորդ կամ անատակ դարձած մասեր: Այս վերանորոգումը հայելու է խօսքերուն ու ծիսակատարումին կազմակերպումին՝ այնպիսի՝ ձեւով որ անոնք աւելի յստակօրէն արտայայտեն իրենց նշանակած սուրբ իրականութիւնները ու նաեւ այնպիսի՝ մէկ կերպով՝ որ հաւատացեալ ժողովուրդն ալ կարենայ իր կարողութեան չափով՝ զանոնք հեշտօրէն հասկնալ եւ անոնց մասնակցիլ լրիւ, գործօն եւ հաւաքական հանդիսակատարումով: Այս պատճառով՝ Տիեզերական Ժողովս հետեւեալ ընդհանուր չափանիշները սահմանեց.

ա. Ընդհանուր չափանիշներ

*Ծիսակատարումին կազմակերպումը*

22. 1) Ծիսակատարումին կազմակերպումը կանոնաւորելու իրաւունքը կախեալ է մի՛ միայն Եկեղեցւոյ իշխանութենէն, Սուրբ Աթոռէն եւ իրաւասու եպիսկոպոսէն:

2) Կանոնագրին զօրութեամբ՝ ծիսակատարումին կազմակերպումը՝ իրաւասութեան սահմանած չափով կը պատկանի նաեւ տուեալ սահմանի մը մէջ օրինաւորապէս կայացած եպիսկոպոսաց այլազան ժողովներուն:

3) Այս պատճառով՝ բացարձակապէս ուրիշ ո՛չ ոք, անգամ քահանան՝ չի կրնար ծիսակատարումին բան մը ինքնակամօրէն աւելցնել, պակսեցնել կամ փոխել:

### *Աւանդութիւն եւ յառաջդիմութիւն*

23. Որպէսզի սրբազան աւանդութիւնը պահպանուի եւ միանգամայն օրինաւոր յառաջդիմութեան մը ընթացք տրուի, հարկ է ծիսակատարումին վերատեսութեան ենթարկուելիք իւրաքանչիւր մասը միշտ սկսիլ աստուածաբանական, պատմական, հովուական խնամուած ուսումնասիրութեամբ մը: Նկատի առնուելու են նաեւ ծիսակատարութեան կառոյցին եւ մտածումին ո՛չ միայն ընդհանուր օրէնքները, այլ նաեւ ծիսական նորագոյն վերանորոգումէն եւ զանազան տեղերուն մէջ տրուած արտօնութիւններէն ձեռք բերուած փորձառութիւնը: Հուսկ վերանորոգումները կատարուելու են եթէ Եկեղեցւոյ օգուտը զանոնք իսկապէս եւ ստուգապէս կը պահանջէ, լաւ ստուգելէ ետք որ բերուած նոր ձեւերը յառաջ կու գան նախապէս գոյութիւն ունեցող ձեւերէն, որպէս անոնց օրկանական զարգացումը:

Վերջապէս կարելիին չափով հսկելու է որ սահմանակից շրջաններուն հետ բաղդատած՝ ծիսակատարման շատ նկատելի տարբերութիւններ չստեղծուին:

### *Սուրբ Գիրքը եւ ծիսակատարումը*

24. Սուրբ Գիրքը շատ մեծ կարեւորութիւն ունի ծիսակատարումին մէջ, քանի անկէ քաղուած են ընթերցուող էջերը, նաեւ զանոնք բացատրող յորդորը (homélie) եւ երգուած սաղմոսները: Անկէ ներշնչուելով ու անոր մղումով է որ ծնած են աղօթքները, մաղթանքները եւ ծիսական տաղերը (hymnes) եւ անով կը բացատրուին ծիսակատարումին շարժումներն ու խորհրդանիշները: Հետեւաբար ծիսակատարումի վերանորոգումը, զարգացումը եւ յարմարեցումը իրագործելու համար, հարկ է հրահրել Սուրբ Գիրքին ախորժելի ու կենդանի ճաշակը, որուն

վկան է արեւելեան թէ արեւմտեան ծէսերուն յարգելի  
աւանդութիւնը:

*Վերատեսութիւն ծիսական գիրքերուն*

25. Ծիսական գիրքերը ընդփոյթ վերատեսութեան ենթարկուելու  
են՝ դիմելով մասնագէտներու գործակցութեան եւ խորհրդակցելով  
աշխարհի զանազան շրջաններու եպիսկոպոսներուն հետ:

բ. Զափանիշներ՝ քաղուած ծիսակատարումին բնոյթէն,  
որպէս նուիրապետական եւ հասարակական արարք

26. Ծիսակատարումը անհատական արարք մը չէ, այլ  
հանդիսակատարումը նոյնինքն Եկեղեցոյ, որ «սուրբ խորհուրդն է  
միութեան», այսինքն՝ սուրբ ժողովուրդն է, խմբուած եւ  
կազմակերպուած՝ եպիսկոպոսներուն իշխանութեան ներքեւ (33):

Այս պատճառով՝ ծիսական արարքները կը պատկանին Եկեղեցոյ  
ամբողջական Մարմնին, անոր արտայայտութիւնն են եւ անոր կը  
հային, բայց կը վերաբերին նաեւ անոր իւրաքանչիւր անդամին,  
թէեւ տարբեր կերպերով, ըստ զանազանութեան դասակարգերուն,  
պաշտօններուն եւ անոնց գործօն մասնակցութեան:

*Հասարակաց հանդիսակատարում*

27. Ամէն անգամ որ ծէսերը, իւրաքանչիւրը իր յատուկ բնոյթին  
համեմատ՝ հաւաքական հանդիսակատարում մը կ'ենթադրեն  
հաւատացեալներուն յաճախումովն ու գործօն մասնակցութեամբ,  
հարկ է որ ասիկա միւս անհատական ու կէս առանձնական  
հանդիսակատարումէն գերազանց նկատուի՝ կարելիի չափով:

Եւ ասիկա յատկապէս կը զօրէ պատարագի մատուցման  
պարագային, (նոյնիսկ եթէ պատարագը միշտ կը պահպանէ իր  
հասարակաց եւ ընկերային բնոյթը), ինչպէս նաեւ սուրբ  
խորհուրդներուն մատակարարումին համար:

*Հանդիսակատարումին յարգելիութիւնը*

28. Ծիսական հանդիսակատարումներուն մէջ՝ ամէն ոք, պաշտօնակալ թէ հաւատացեալ, իր պաշտօնը ստանձնելով, կատարած պիտի ըլլայ լրիւ ու միայն ինչ որ իրեն կը վերաբերի, նիւթին բնոյթին եւ ծիսական չափանիշներուն զօրութեամբ:

*Ներշնչել ծիսակատարութեան ոգին*

29. Անգամ խորանին ծառայող սպասաւորները, ընթերցողները, մեկնաբանողները եւ երգչախումբին անդամները ծիսական իսկական ծառայութիւն մը կը մատուցանեն, ուստի իրենց պաշտօնը կատարելու են ամբողջական ու անկեղծ բարեպաշտութեամբ ու կարգապահութեամբ, ինչ որ թէ՛ պատշաճ է այսպիսի մեծ պաշտօնի մը, թէ՛ ալ իրաւացիօրէն պահանջուած է Աստուծոյ ժողովուրդին կողմէ:

Հետեւաբար պէտք է խնամքով ներշնչել անոնց ծիսակատարութեան ոգին՝ անոնցմէ իւրաքանչիւրին կարողութեան համաձայն, եւ զանոնք պատրաստել որ իրենց ստանձնած պաշտօնը կատարեն ճշգրիտ ու կարգապահ կերպով:

*Հաւատացեալներուն գործօն մասնակցութիւնը*

30. Ժողովուրդին գործօն մասնակցութիւնը հրահրելու համար՝ տեղ տալու է անոր բացազանչութիւններուն, պատասխաններուն, սաղմոսներուն, կցորդներուն (antiennes), մեղեդիներուն, փոխերուն ու երգերուն, ինչպէս նաեւ անոր շարժումներուն, մարմնի կեցուածքներուն: Իսկ իր տեղին՝ յարգելու է նաեւ սրբազան լրութիւնը:

31. Ծիսական գիրքերը վերատեսելու ատեն՝ ուշադիր ըլլալու է որ խորագիրները նկատի ունենան հաւատացեալներուն մասնակցութեան բաժինը:

*Ծիսակատարում եւ ընկերային դասակարգերը*

32. Ծիսակատարումին ընթացքին՝ նկատի առնուելու չէ անհատին ընկերային կամ դասակարգային հանգամանքը, բացի սրբազան արարողութիւններուն կողմէ պահանջուած պատշիւրէն եւ քաղաքական իշխանութիւններուն հանդէպ մեծարանքէն:

գ. Չափանիշներ՝ քաղուած ծիսակատարումին  
դաստիարակչական եւ հովուական բնոյթէն

33. Թէեւ ծիսակատարումը գլխաւորապէս աստուածային մեծվայելչութեան պաշտամունքն է, սակայն ան հաւատացեալ ժողովուրդին համար կը բովանդակէ նաեւ դաստիարակչական մեծ արժէք (34): Ծիսակատարումին ընթացքին՝ Աստուած կը խօսի իր ժողովուրդին, Քրիստոս կը շարունակէ աւետարանել, ժողովուրդն ալ իր երգերով եւ աղօթքներով կը պատասխանէ Աստուծոյ:

Առաւել՝ յանուն Քրիստոսի հաւաքոյթին նախագահող քահանային կողմէ Աստուծոյ մատուցուող աղօթքները կը կատարուին սուրբ ժողովուրդին եւ բոլոր ներկաներուն անունով: Իսկ Քրիստոս կամ Եկեղեցին ծիսակատարումին համար գործածուող տեսանելի նշանները ընտրած են, արտայայտելու համար աստուածային անտեսանելի իրականութիւնները: Հետեւաբար ո՛չ միայն երբ կը կարդանք այն «ինչ որ գրուած է մեր շինութեան համար» (Հո 15, 4), այլ նաեւ երբ Եկեղեցին կ'աղօթէ, կ'երգէ կամ կը ծիսակատարէ, ներկաներուն հաւատքն ալ անոնցմէ սնունդ կը քաղէ, հոգիները դէպի Աստուած կը բարձրանան, զայն մեծարելու եւ աւելի առատ շնորհքներ ընդունելու համար:

Ծիսական վերանորոգումին ատեն, հարկ է նաեւ յարգել հետեւեալ չափանիշները:

*Ծէսերուն ներդաշնակութիւնը*

34. Ծէսերը ցուցաբերելու են վսեմ պարգոյթին մը, ըլլալու են նկատառելիօրէն կարճ եւ խուսափելու են աւելորդ կրկնութիւններէն, յարմարելու են հաւատացեալներուն ըմբռնումի կարողութեան եւ առ հասարակ՝ հասկցուելու համար բազմաթիւ բացատրութիւններու կարիքն ունենալու չեն:

*Սուրբ Գիրքը, քարոզը եւ քրիստոնէականի ծիսական դասաւանդումը*

35. Որպէսզի ծիսակատարումին շարժուձեւերուն եւ խօսքերուն ներքին միութիւնը յստակօրէն բացայայտուի.

1) Սրբազան արարողութիւնները բարեփոխուելու են՝ աւելի առատ, աւելի բազմազան եւ աւելի յարմար ընթերցումներ քաղելով Սուրբ Գիրքէն:

2) Արարողութեան թոյլատրած չափով՝ ծիսակատարումին մաս կազմող քարոզին յարմարագոյն պահը նշանակուելու է նաեւ ծանօթագրութիւններուն մէջ: Քարոզելու առաքելութիւնը հաւատարմօրէն եւ խղճմտօրէն գործադրուելու է: Քարոզը քաղուելու է նախ եւ առաջ Սուրբ Գիրքէն եւ ծիսակատարումէն, որ աւետումն է Աստուծոյ հրաշալիքներուն փրկագործութեան պատմութեան մէջ, որ խորհուրդն է մեր մէջ միշտ գործօն ու ներկայ եղող Քրիստոսին, յատկապէս ծիսական հանդիսակատարումներուն միջոցին:

3) Աւելի ծիսական բնոյթով քրիստոնէականի դասաւանդումը փոխանցուելու է բոլոր կերպերով եւ ի հարկին՝ նաեւ ծիսակատարումին ընթացքին կարճ յորդորներ (monitions) նախատեսուելու են, որոնք տրուելու են քահանային կամ յարմար պաշտօնեայի մը կողմէ, սակայն միայն յարմարագոյն պահերուն եւ դիպուկ բառերով կամ անոնց համապատասխանող խօսքերով:

4) Յանձնարարելի է Աստուծոյ Խօսքը մատուցանել հանդիսաւոր տօներուն նախօրեակին, ապա Յինանց եւ Քառասնորդաց շրջանի կարգ մը տօնակատարութիւններուն, ինչպէս նաեւ կիրակի եւ տօնական օրերուն, մանաւանդ հոն ուր քահանայ չկայ. այս պարագային՝ սարկաւազ մը կամ եպիսկոպոսէն նշանակուած անձ մը կ'ուղղէ տօնակատարումը:

#### *Ծիսակատարումի լեզուն*

36. 1) Լատիներէնի գործածութիւնըն պահպանուելու լատին ծէսին մէջ, բացի տեղական իրաւասութենէն:

2) Պատարագին ընթացքին, խորհուրդներուն մատակարարումին կամ ծիսակատարումի այլ մասերուն մէջ՝ տեղական լեզուն գործածելը կրնայ յաճախ շատ օգտակար ըլլալ ժողովուրդին համար, ուստի կարելի է անոր աւելի լայն տեղ յատկացնել, մասնաւորապէս ընթերցումներուն, յորդորներուն, կարգ մը

աղօթքներուն եւ երգերուն ընթացքին, իւրաքանչիւր պարագային՝ յարգելով յաջորդ գլուխներուն մէջ մեր սահմանելիք չափանիշները:

3) Այս չափանիշները պահպանուելէն ետք՝ 22-րդ յօդուածով նշուած տեղական եկեղեցիի իշխանութեան (ի պահանջել հարկին՝ նաեւ նոյն լեզուն խօսող սահմանակից շրջանին եպիսկոպոսներուն) կը պատկանի սահմանել լեզուն եւ անոր գործածութեան կերպը, այս արարքը Սուրբ Աթոռին կողմէ ընդունիլ տալէ, այսինքն վաւերացնելէ ետք:

4) Ծիսակատարումին ատեն գործածուելիք լատին բնագրէն տեղական լեզուին թարգմանութեան վաւերացումը կատարուելու է վերեւ նշուած երկրին եկեղեցական իշխանութեան կողմէ:

դ. Չափանիշներ՝ ծիսակատարումը պատշաճեցնելու  
զանազան ժողովուրդներու նկարագրին  
եւ աւանդութիւններուն հետ

37. Եկեղեցին չի ցանկար հաւատքին կամ հաւաքականութեան մը բարիքին չհայող մարգերուն եւ նոյնիսկ ծիսակատարումին մէջ՝ պարտադրել միատեսակ բանաձեւումի մը խիստ կերպը, ընդհակառակն՝ ան կը մշակէ եւ կը զարգացնէ զանազան ժողովուրդներուն իւրայատկութիւններն ու ձիրքերը: Անոնց բարքերուն մէջ ինչ որ աւելորդապաշտութիւններու կամ սխալներու անխզելիօրէն կապուած չէ, ան բարեհաճութեամբ կը գնահատէ եւ կարելիին չափով՝ կ'ապահովէ անոր անաղարտ պահպանումը, զայն երբեմն նոյնիսկ կ'ընդունի ծիսակատարումին մէջ, պայմանաւ որ ասիկա համերաշխ մնայ ճշմարիտ ու հարագատ ծիսական ոգիին սկզբունքներուն հետ:

38. Ընդունելի պիտի ըլլան զանազան խմբաւորումներուն, շրջաններուն, ժողովուրդներուն, յատկապէս միսիոնարական երկիրներուն, օրինաւոր տարբերութիւնները, յարմարեցումները, նոյնիսկ ծիսական գիրքեր վերատեսելու ատեն, պայմանաւ որ պահպանուի հռոմէական ծեսին էական միութիւնը: Լաւ պիտի ըլլայ այս սկզբունքը աչքի առջեւ ունենալ ծեսին կառոյցը բարեփոխելու եւ կարմիրով ծանօթագրումները (խորագիրները) սահմանելու համար:



39. Պահպանելով ծիսական գիրքերուն տպագրութեան համար գծուած սահմանները (տես՝ յօդ. 22, 2), տեղւոյն իրաւասու եկեղեցական իշխանութեան կը պատկանի յարմարեցումները որոշելը, մանաւանդ խորհուրդներուն եւ խորհրդակերպերուն (sacramentaux) մատակարարումին, թափօրներուն, ծիսական լեզուին, հոգեւոր երաժշտութեան եւ արուեստներուն վերաբերեալ, միշտ այս Սահմանադրութեանս հիմնական չափանիշներուն համեմատ:

40. Բայց, քանի որ զանազան վայրերուն եւ պարագաներուն մէջ ծիսակատարութիւնը աւելի խորապէս յարմարցնելու շտապ պահանջը կը ներկայանայ, ինչ որ յաւելեալ դժուարութիւն ալ կը պատճառէ, ուստի.

1) Տեղւոյն եկեղեցական իշխանութիւնը (նշուած՝ 22,2-ի յօդուածով), ուշադրութեամբ եւ խոհեմութեամբ նկատի առնելու է թէ ինչը այս մարզին մէջ կրնայ պատեհօրէն ներառուիլ աստուածային պաշտամունքէն ներս, իւրաքանչիւր ժողովուրդին աւանդութիւններուն եւ մտածելակերպին համաձայն: Առ այս օգտակար եւ անհրաժեշտ նկատուող յարմարեցումները Սուրբ Աթոռին առաջարկուելու եւ անոր հաւանութեամբ՝ ներմուծուելու են:

2) Սակայն որպէսզի յարմարեցումը կատարուի պահանջուած զգուշաւորութեամբ, Սուրբ Աթոռին կողմէ կարելիութիւնը պիտի տրուի տեղական իշխանութեան՝ թոյլ տալու եւ ի յարկին՝ ուղղելու պահանջուած նախափորձերը, ասոնց յարմար կարգ մը հաւաքներուն ընթացքին եւ որոշ ժամանակի մը համար:

3) Եւ որովհետեւ ծիսական օրէնքներու յարմարեցումը սովորաբար յատուկ դժուարութիւններու կը հանդիպի, յատկապէս միսիոնար երկիրներուն մէջ, հետեւաբար զայն կատարելու համար՝ հարկ է այս մարզին մասնագէտներ ունենալ իր տրամադրութեան տակ:

#### **Դ. Ծիսական կեանքին զարգացումը թեմին եւ ժողովրդապետութեան մէջ**

*Թեմին ծիսական կեանքը*

41. Եպիսկոպոսը պետք է նկատուի իր հօտին հովուապետը, քանի իր հաւատացեալներուն քրիստոնէայ կենցաղը, կերպով մը, իրմէ կը բխի եւ իրմէ կախեալ է:

Այս պատճառով՝ ամէնքը մեծ համարմունք ունենալու են իրենց եպիսկոպոսին շուրջ կատարուող թեմին ծիսական կեանքին հանդէպ, յատկապէս աթոռանիստ եկեղեցիին մէջ: Համոզուած ըլլալու են որ Եկեղեցիին գլխաւոր արտայայտութիւնը կը կայանայ Աստուծոյ Ժողովուրդին ամբողջական եւ գործօն մասնակցութեան մէջ նո՛յն ծիսական տօնակատարումին, մանաւանդ նո՛յն սուրբ Հաղորդութեան, միատեղ աղօթքով, նո՛յն խորանին շուրջ, ուր եպիսկոպոսը կը հանդիսակատարէ՝ շրջապատուած իր քահանայական դասով եւ պաշտօնեաներով (35):

#### *Ժողովրդապետութեան ծիսական կեանքը*

42. Քանի որ եպիսկոպոսը կարող չէ միշտ ու ամէն տեղ իր ամբողջ հօտը անձամբ գլխաւորել, ուստի կը հարկադրուի հաւատացեալներէն համախմբումներ (assemblée) կազմել, որոնց կարելորագոյններն են զինք փոխարինող հովիւի մը կողմէ տեղւոյն վրայ կազմակերպուած ժողովրդապետութիւնները, որոնք կերպով մը կը ներկայացնեն աշխարհիս վրայ հաստատուած տեսանելի Եկեղեցին:

Այս պատճառով՝ պետք է հաւատացեալներուն եւ կղերին մտածումներուն եւ ապրելակերպին մէջ արժեւորել ժողովրդապետութեան ծիսական կեանքը եւ անոր առնչուածութիւնը եպիսկոպոսին հետ, ջանալ նաեւ զարգացնել ժողովրդապետական հասարակութեան ըմբռնումը՝ յատկապէս կիրակնօրեայ պատարագին հաւաքական մատուցման հանդէպ:

### **Ե. Ծիսական հովուականի զարգացումը**

#### *Ծիսական վերանորոգումը՝ շնորհքը Սուրբ Հոգիին*

43. Սուրբ Ծիսակատարումը զարգացնելու եւ վերանորոգելու եռանդը արդարացիօրէն կը նկատուի իբր արտայայտութիւնը Աստուծոյ նախախնամական տրամադրութիւններուն՝ հանդէպ ներկայ ժամանակներուն, ինչպէս նաեւ որպէս Սուրբ Հոգիին

անցքը՝ իր Եկեղեցիին մեջէն, որուն կեանքին եւ նոյնիսկ ներկայի նուրբ զգայնութեան բոլոր արտայայտութիւններուն եւ հոգեւոր գործունէութեան կը հաղորդէ յատկանշական դրոշմ մը:

Ուստի այս ծիսական հովուականին աւելի սատարելու համար՝ Տիեզերական Ժողովս հետեւեալը կը սահմանէ.

#### *Ծիսական ազգային յանձնախումբ*

44. Պատշաճ է որ 22, 2-րդ յօդուածով նշուած շրջանին վրայ իրաւասութիւն ունեցող եկեղեցական իշխանութիւնը կազմէ ծիսական յանձնախումբ մը, որուն օժանդակեն ծիսագիտութեան, հոգեւոր երաժշտութեան, սրբազան արուեստին եւ հովուական մարզերուն մասնագէտ մարդիկ: Այս յանձնախումբին կարելիին չափով օժանդակելու է հովուական ծիսագիտութեան Հաստատութիւն մը, որուն ի հարկին՝ անդամ ընդունուին հարցին մասնագէտ աշխարհականներ: Այս յանձնախումբին պարտականութիւնն ըլլայ վերել նշուած շրջանի եկեղեցական իշխանութեան ուղղութեան տակ եւ իր մասնագիտութեան մարզին մէջ՝ վարել ծիսական հովուականը, հրահրել փնտռութիւնն ու պահանջուած փորձարկումները՝ ամէն անգամ որ հարկ ըլլայ յարմարեցումներ առաջարկել Սուրբ Աթոռին:

#### *Ծիսական թեմական յանձնախումբ*

45. Նոյն ուղղութեամբ՝ ծիսական յանձնախումբ մըն ալ կազմուելու է իւրաքանչիւր թեմի մէջ, թափ տալու համար ծիսական գործունէութեան՝ եպիսկոպոսին ցուցմունքներուն համեմատ: Երբեմն բարեպատեհ ալ կրնայ ըլլալ, որ շատ մը թեմեր միատեղ յանձնախումբ մը կազմեն եւ ան թափ տայ ծիսական հարցին հաւաքական աշխատանքով:

#### *Այլ յանձնախումբեր*

46. Ծիսական յանձնախումբէն զատ՝ իւրաքանչիւր թեմին մէջ ըստ կարելոյն կազմուելու են նաեւ հոգեւոր երաժշտութեան եւ սրբազան արուեստի յանձնախումբեր: Անհրաժեշտ է որ վերել նշուած այս երեք յանձնախումբերը իրարու հետ գործակցին իրենց ուժերը միացնելով. յանձնարարելի է նաեւ զանոնք յաճախակի համախմբել մէկ յանձնախումբի մը մէջ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ  
ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ  
Գոհութեան Խորհուրդը

*Պատարագը եւ գատկական խորհուրդը*

47. Վերջին ընթրիքին գիշերը, երբ մեր Փրկիչը պիտի մատնուէր, հաստատեց իր Մարմինն եւ Արինին գոհական խորհուրդը, դարերու ընթացքին յաւերժացնելու համար խաչին գոհաբերումը մինչեւ իր գալը, այսպէս՝ իր սիրեցեալ Հարսին՝ Եկեղեցիին յանձնելով իր մահուան եւ յարութեան յիշատակը եղող սիրոյ խորհուրդը՝ նշան միութեան, զօդ սիրոյ (36), գատկական խնճոյք, ուր ճաշակուողը՝ Քրիստոս ի նքն է, ուր մարդու հոգին շնորհքով կը լիանայ, ապագայ փառքին գրաւականն ալ կը տրուի մեզի (37):

*Հաւատացեալներու գործօն մասնակցութիւնը*

48. Առ այս՝ Եկեղեցին ալ հոգ կը տանի որ հաւատացեալները հաւատքի այս խորհուրդին մասնակցին, ո՛չ որպէս մունջ ու օտար հանդիսատեսներ, այլ ծիսակատարումին եւ աղօթքներուն ընդմէջէն զայն լաւապէս ըմբռնելով՝ սրբազան արարողութեան իրենց գիտակից եւ գործօն մասնակցութիւնը բերեն, թրծուին Աստուծոյ Խօսքով, կազդուրուին Տիրոջ Մարմնին սեղանէն, փառք տան Աստուծոյ. իսկ անարատ գոհը մատուցանեն ո՛չ թէ միայն քահանային ձեռքերով, այլ նաեւ անոր միացած՝ գիտնան իրենք զիրենք ընծայել եւ օրէ օր լիացուին Քրիստոսի միջնորդութեամբ (38), միանան Աստուծոյ եւ իրարու, որպէսզի հուսկ Աստուած դառնայ ամէն ինչ ամէնուն մէջ:

49. Այս պատճառով՝ որպէսզի Պատարագի գոհաբերումը իր ծիսակատարումի ձեւին տակ անգամ ստանայ հովուական ամբողջական արդիւնատրում, Տիեզերական Ժողովս հետեւեալը կը սահմանէ՝ յատկապէս կիրակի եւ տօնի օրերուն ժողովուրդին մասնակցութեամբ մատուցուող Պատարագներուն վերաբերեալ.

*Վերատեսութիւն թիւ Պատարագին*

50. Պատարագի ծիսակատարումը վերատեսուելու է այնպիսի՝ ձեռով որ աւելի բացայայտուին անոր իւրաքանչիւր մասերուն դերը եւ անոնց միջեւ կապակցութիւնը, ապա նաեւ հեշտանայ հաւատացեալներուն Պատարագին բարեպաշտ եւ գործօն մասնակցութիւնը:

Հետեւաբար, ծիսակատարումներուն էութիւնը հաւատարմօրէն պահպանելով հանդերձ՝ պարզելու եւ զանց առնելու է ինչ որ ժամանակի ընթացքին կրկնապատկուած կամ աւելցուած է առանց մեծ օգտակարութեան. իսկ ժամանակին մաշումով անհետացած կարգ մը ուրիշ սովորութիւններ պիտի վերահաստատուին սուրբ Հայրերուն նախորդ չափանիշներուն համեմատ՝ որքանով որ անոնք պատեհ կամ անհրաժեշտ պիտի թուին:

#### *Սուրբ Գրային աւելի մեծ հարստացում*

51. Աստուծոյ Խօսքի սեղանը հաւատացեալներուն աւելի ճոխութեամբ ներկայացնելու համար՝ Սուրբ Գիրքին գանձերն ալ աւելի լայն բացուելու են, որպէս զի որոշ տարիներու տեւողութեամբ՝ Սուրբ Գիրքի կարեւորագոյն մասը ժողովուրդին կարդացուի:

#### *Տօնական քարոզը*

52. Ծիսական տարիին ընթացքին տրուող տօնական այն քարոզները, որոնք կը բացատրեն սրբազան էջերէ քաղուած հաւատքին խորհուրդները եւ քրիստոնեայ կենցաղին չափանիշները, մեծապէս յանձնարարելի են որպէս ծիսակատարումին հարազատ մաս: Եթէ լուրջ պատճառ չկայ, անոնք զանց առնուելու չեն՝ մանաւանդ ժողովուրդին մասնակցութեամբ մատուցուող կիրակնօրեայ եւ հրամայեալ տօներուն պատարագներուն ընթացքին:

#### *Հաւատացեալներուն աղօթքը*

53. Աւետարանէն ու քարոզէն ետք, «հասարակութեան» կամ «հաւատացեալներուն աղօթքը» վերահաստատուելու է յատկապէս կիրակի եւ հրամայեալ տօներուն, որպէսզի ժողովուրդին մասնակցութեամբ՝ աղօթքներ մատուցուին սուրբ Եկեղեցիին, իշխանութեան գլուխ եղողներուն, բազմազան կարիքներու մէջ

գտնուողներուն, հուսկ ամբողջ մարդկութեան եւ համայն աշխարհի փրկութեան համար (39):

*Պատարագի ատեն լատիներէնն ու երկրին լեզուն*

54. Ժողովուրդին մասնակցութեամբ մատուցուող պատարագներուն ընթացքին՝ կարելի է պատշաճ տեղ յատկացնել երկրին լեզուին, մանաւանդ ընթերցումներուն եւ «հասարակաց աղօթքին», ինչպէս նաեւ տեղական պայմաններուն համեմատ՝ ժողովուրդին վերաբերող մասերուն, ըստ ներկայ Սահմանադրութեան 36-րդ յօդուածին:

Սակայն հսկելու է որ հաւատացեալները կարենան լատիներէնը միատեղ աղօթել կամ երգել, ինչպէս նաեւ հասարակ պատարագին մէջ իրենց վերաբերող մասերը:

Բայց եթէ մի տեղ պատարագի ատեն երկրին լեզուն աւելի լայնօրէն գործածելը յարմար նկատուի, յարգել ինչ որ հրահանգուած է ներկայ Սահմանադրութեան 40-րդ յօդուածով:

*Հաղորդութիւնը եւ անոր երկու տեսակի ներքեւ բաշխումը*

55. Ջերմօրէն կը յանձնարարուի որ հաւատացեալները Պատարագին աւելի կատարեալ կերպով մասնակցին, այսինքն՝ քահանային հաղորդուելէն ետք՝ իրենք եւս ընդունին Տիրոջ Մարմինը՝ նոյն Պատարագով սրբագործուած հացերով:

Տրիտենտեան Ժողովին (40) սահմանած դաւանական սկզբունքները պահպանելով, ինչպէս նաեւ եպիսկոպոսներուն դատումին համեմատ՝ Սուրբ Աթոռին կողմէ յստակացուելիք պարագաներուն, երկու տեսակի ներքեւ հաղորդուելու արտօնութիւնը կրնայ շնորհուիլ քահանաներուն, կրօնաւորներուն եւ աշխարհականներուն, օրինակ՝ նոր ձեռնադրեալներուն՝ իրենց ձեռնադրութեան Պատարագին միջոցին, ապա իրենց երդումը կատարող կրօնաւորներուն՝ իրենց երդման Պատարագին միջոցին, նոր մկրտեալներուն՝ մկրտութեան յաջորդող Պատարագին միջոցին:

*Պատարագին միութիւնը*

56. Պատարագը կերպով մը բաղկացնող երկու մասերը, այսինքն՝ իօսքի եւ հաղորդութեան ծիսակատարումը, սերտօրէն միացած են

իրարու, պաշտամունքային մէկ արարողութիւն կազմելու չափ: Այս պատճառով ալ՝ Տիեզերական Ժողովս ջերմօրէն կը յորդորէ հոգեւոր հովիւները որ քրիստոնէականի դասաւանդումին միջոցին՝ ինամքով ուսուցանեն հաւատացեալները թէ պարտաւոր են ամբողջակա՛ն Պատարագին մասնակցիլ, յատկապէս կիրակի եւ պարտաւորիչ տօնի օրերը:

### *Համապատարագ*

57. 1) Քահանայութեան միութիւնը լաւապէս արտայայտող համապատարագը Եկեղեցիին կողմէ Արեւմուտքի թէ Արեւելքի մէջ մինչեւ օրս պահպանուած ըլլալով՝ Տիեզերական Ժողովս որոշեց համապատարագելու արտօնութիւնը ընդարձակել հետեւեալ պարագաներուն.

1-ա Աւագ Հինգշաբթի օրը, մեռոնի օրհնութեան եւ երեկոյեան Պատարագին:

1-բ Տիեզերական Ժողովներուն, եպիսկոպոսաց ժողովներուն եւ Սինհոդոսներու Պատարագներուն:

1-գ Աբբայական օրհնութեան Պատարագին:

2- Իսկ արտօնութեամբ Վիճակաւորին, որուն կը պատկանի համապատարագի մը պատեհութիւնը դատել.

2-ա Վանահայրական Պատարագին եւ եկեղեցիներուն աւագ Պատարագին, հոն ուր հաւատացեալներուն հոգեւոր բարիքը չի պահանջեր որ ներկայ բոլոր վարդապետները առանձին պատարագեն:

2-բ Քահանաներու թէ կրօնաւորներու որեւէ հաւաքական հանդիպումներուն:

2) 1- Եպիսկոպոսին կը վերաբերի վարել եւ կանոնաւորել իր թեմին մէջ մատուցուող համապատարագները:

2- Սակայն ամէն քահանային միշտ ազատութիւն վերապահուելու է պատարագելու անհատապէս, բայց ո՛չ նոյն եկեղեցիին մէջ եւ նոյն պահուն, ո՛չ ալ Աւագ Հինգշաբթի մը:

58. Համապատարագի նոր ծիսակատարում մը մշակուելու է, որ ներփակուելու է հռոմէական հայրապետական թէ սովորական պատարագամատոյցին մէջ:

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ**  
**ՄԻԻՍ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱԿԵՐՊԵՐԸ**

*Խորհուրդներուն բնոյթը*

59. Խորհուրդներուն նպատակն է մարդիկը սրբացնել, Քրիստոսի Մարմինը կերտել եւ Աստուծոյ պաշտամունք մատուցանել, բայց անոնք, որպէս նշաններ՝ ունին նաեւ ուսուցանելու դեր: Խորհուրդները ո՛չ միայն հաւատքը նախապէս կ'ենթադրեն, այլ նաեւ խօսքերու եւ իրերու միջոցով՝ զայն կը սնուցանեն, կ'ամրացնեն ու կ'արտայայտեն ու այս իսկ պատճառով՝ անոնք կոչուած են հաւատքի խորհուրդներ: Անոնք անշուշտ շնորհքը կը պարգեւեն, բայց նաեւ իրենց ծիսակատարումը հաւատացեալները աւելի լաւ կը տրամադրէ շնորհքը արդիւնաւոր կերպով ընդունելու, Աստուծոյ արդար պաշտամունք մատուցանելու եւ եղբայրսիրութիւնը գործադրելու:

Հետեւաբար յոյժ կարեւոր է որ հաւատացեալները հեշտութեամբ հասկնան խորհուրդներուն նշանները եւ կարելիի չափով՝ յաճախակի մերձեանս քրիստոնէայ կեանքը սնուցանող խորհուրդներուն:

*Խորհրդակերպերը*

60. Մեր մայրը սուրբ Եկեղեցին հաստատած է նաեւ խորհրդակերպերը: Անոնք սրբազան նշաններ են որոնց միջոցաւ եւ՝ շնորհիւ խորհուրդներուն հետ ունեցած իրենց որոշ նմանութեան՝ հոգեւոր արդիւնքներ յատուկ կերպով կը նշուին եւ կ'ընկալուին Եկեղեցիին միջնորդութեամբ: Անոնց միջոցով՝ մարդիկ տրամադիր կը դառնան ընդունելու խորհուրդներուն գլխաւոր արդիւնքը, իսկ կեանքին զանազան պարագաները կը սրբանան:

61. Այսպէս՝ խորհուրդներուն եւ խորհրդակերպերուն ծիսակատարումը կը սրբացնէ լաւ տրամադրուած հաւատացեալներուն կեանքի դէպքերը՝ շնորհիւ Քրիստոսի չարչարանքներուն, մահուան եւ յարութեան զատկական խորհուրդէն բխող շնորհքներուն, որովհետեւ իրմէ՛ է որ խորհուրդներն ու խորհրդակերպերը իրենց զօրութիւնը կը քաղեն եւ գրեթէ չկայ նիւթական իրերու յարգալից գործածութիւն մը որ



կարելի չըլլայ ուղղել դեպի մարդուն սրբացումը եւ Աստուծոյ գովաբանութիւնը:

*Խորհուրդներու ծիսակատարումին վերատեսութեան անհրաժեշտութիւն*

62. Սակայն ժամանակին ծաւալումով՝ խորհուրդներուն եւ խորհրդակերպերուն ծիսակատարումէն ներս թափանցած են տարրեր, որոնք ներկայիս՝ թոյլ չեն տար անոնց բնոյթն ու վախճանը ըստ բաւականին յստակ տեսնել, ուստի պահանջուած է որ հոն կարգ մը յարմարեցումներ կատարուին մեր ժամանակին կարիքներուն հետ: Հետեւաբար Տիեզերական Ժողովս այս մասին հետեւեալը կը սահմանէ:

*Լեզու*

63. Քանի որ խորհուրդներուն եւ խորհրդակերպերուն մատակարարումին մէջ՝ երկրին լեզուն գործածելը կարող է հաւատացեալներուն մեծ օգտակարութիւն ընծայել, ուստի անոր գործածութեան աւելի լայն տեղ տրուելու է, ըստ հետեւեալ կանոններուն.

ա) Կարելի է երկրին լեզուն գործածել խորհուրդներուն եւ խորհրդակերպերուն մատակարարումին միջոցին, ըստ 36-րդ յօդուածին:

բ) Հետեւելով հռոմէական ծիսարանին նոր տպագրութեան՝ իւրաքանչիւր երկրին պահանջքներուն եւ լեզուին հետ յարմարեցուած յատուկ ծիսարաններ ընդ փոյթ պատրաստուելու են եկեղեցական ա՛յն իշխանութեան կողմէ, որ իրաւասութիւն ունի ներկայ Սահմանադրութեան 22,2 յօդուածով նշուած շրջանին վրայ: Այդ ծիսարանները սուրբ Աթոռին կողմէ վերատեսուելէ ետք, պիտի գործածուին իրենց յատուկ շրջաններուն մէջ: Այս ծիսարաններուն կամ անհատական հաւաքածոյ ծիսարաններուն խմբագրումին մէջ՝ զանց պիտի չառնուին հռոմէական ծիսարանին գլուխներուն մէջ նշուած հովուական թէ արարողական (rubrical) կամ ընկերային տեսանկիւնէ յատուկ կարեւորութիւն ունեցող ծանուցումները:

*Քրիստոնէականի ուսուցում*

64. Վերանորոգելու է չափահասներու քրիստոնեականի զանազան հանգրուաններու բաժնուած ուսուցումը, որուն գործածութիւնը նախապէս ստանալու է տեղոյն Վիճակաւորին հաւանութիւնը, այսպէսով՝ հնարաւոր պիտի ըլլայ յատուկ կազմաւորումի սահմանուած քրիստոնեականի ուսուցումի այս շրջանը սրբացնել ժամանակին մէջ տարածուած սրբագան արարողութիւններով:

65. Առաքելավայրերուն մէջ՝ քրիստոնեականի դասաւանդումին պատկանող նախապատրաստումի տուեալներէն զատ, ընդունուելու են նաեւ իւրաքանչիւր ժողովուրդին մօտ գործադրուող նախապատրաստումի ուրիշ ձեւերը, որքանով որ կարելի ըլլայ զանոնք յարմարցնել քրիստոնեայ ծիսակատարումին հետ, ներկայ Սահմանադրութեան 34-40 յօդուածներուն համեմատ:

*Վերատեսութիւն մկրտութեան ծիսակատարումին*

66. Վերատեսելու է չափահասներու մկրտութեան ծիսակատարումին պարզ թէ հանդիսաւոր գոյգ ձեւերը, նկատի առած քրիստոնեականի վերանորոգեալ ուսուցումը, իսկ հոռմեական պատարագամատոյցին մէջ ալ ներմուծուելու է «յընթացս մկրտութեան» յատուկ պատարագ մը:

67. Վերատեսելու է երեխաներու մկրտութիւնը, զայն յարմարցնելով փոքրիկներուն ուրոյն պայմաններուն, առաւել՝ աւելի յստակացուելու են ծնողներուն եւ կնքահայրերուն պաշտօնն ու պարտականութիւնը ծիսակատարումին մէջ:

68. Մկրտուողները բազմաթիւ ըլլալու պարագային՝ մկրտութեան ծիսակատարումին մէջ յարմարեցումներ կատարուելու են՝ տեղոյն Վիճակաւորին դատումին համաձայն: Պատրաստուելու է նաեւ համառօտ ծիսարան մը, որ գործածուի յատկապէս առաքելավայրերու քրիստոնեականի դասատուներուն կողմէ, իսկ մահուան վտանգի պարագային՝ նաեւ հաւատացեալներուն կողմէ, քահանայի եւ սարկաւազի բացակայութեան:

69. «Երեխայի մկրտութեան ատեն՝ զանց առնուած արարողութիւններ» կոչուող ծիսակատարման փոխարէն՝ նոր մը մշակուելու է, որուն մէջ աւելի յստակ եւ աւելի յարմար ձեւով նշուի թէ համառօտ ծիսակատարումով մկրտուած երախան արդէն իսկ ընդունուած է Եկեղեցւոյ ծոցը: Իսկ վաւեր կերպով մկրտուած եւ

կաթողիկե դառնալ ուզողներուն համար, նոր ծիսակատարում մը մշակուելու է, նշելու համար թէ անոնք կ'ընդունուին Եկեղեցոյ հաղորդութեան մէջ:

70. Կարելի է գատկական շրջանէն դուրս՝ մկրտութեան ջուրը օրհնել մկրտութեան արարողութեան ընթացքին, վաւերացուելիք աւելի կարճ բանաձեւումի մը համեմատ:

*Դրոշմի մատակարարման վերատեսութիւն*

71. Դրոշմի մատակարարումն ալ վերատեսուելու է, աւելի բացայայտելու համար այս խորհուրդին ներքին զօղը ամբողջ քրիստոնէական նախամուտքին հետ. ուստի աւելի յարմար է որ մկրտութեան խոստումներուն վերանորոգումը կանխէ սոյն խորհուրդին մատակարարումը: Դրոշմը կրնայ ըստ պատշաճութեան մատակարարուիլ պատարագին ընթացքին, իսկ պատարագէն դուրս կատարուող դրոշմին համար՝ պատրաստելու է անոր իբր ներածական ծառայող բանաձեւը:

*Վերատեսութիւն ապաշխարութեան մատակարարումին*

72. Խոստովանանքի ծիսակատարումն ու անոր բանաձեւները վերատեսուելու են, որպէսզի աւելի յստակօրէն արտայայտեն խորհուրդին բնոյթն ու արդիւնքը:

*Վերատեսութիւն հիւանդաց օծումի մատակարարումին*

73. «Վերջին օծումը», որ կարելի է նաեւ աւելի ճիշդ ձեւով կոչել հիւանդաց օծում, միայն մահամերձներու խորհուրդը չէ, հետեւաբար զայն ընդունելու յարմար պահը արդէն հասած նկատելու է երբ հաւատացեալը՝ ֆիզիքապէս տկարացումի կամ ծերութեան հետեւանքով՝ մահուան վտանգին դիմաց կը գտնուի:

74. Հիւանդաց օծման եւ վերջին թոշակին իրարմէ անջատ ծիսակատարումներէն զատ՝ կազմելու է նաեւ միացեալ ծիսակատարում մը, որուն համեմատ՝ հիւանդաց օծումը մատակարարուելու է վերջին թոշակէն առաջ եւ խոստովանանքէն ետք:

75. Օծումներուն թիւը յարմարցնելու է պարագաներուն հետ, իսկ հիւանդաց օծման աղօթքները վերատեսուելու են որպէսզի անոնք համապատասխանեն խորհուրդը ընդունող հիւանդներուն զանազան վիճակներուն:

*Վերատեսութիւն Կարգերու խորհուրդին*

76. Ձեռնադրութեան ծիսակատարումը վերատեսուելու է ըլլա՛յ որպէս արարողութիւն, ըլլա՛յ որպէս բնագիր: Ձեռնադրութեան կամ օծումի սկիզբը՝ եպիսկոպոսին արտասանած խօսքերը կրնան ըսուիլ տեղական լեզուով:

Եպիսկոպոսական օծման ներկայ բոլոր եպիսկոպոսներուն թոյլ տրուած է իրենց ձեռքերը դնել:

*Վերատեսութիւն Պսակի արարողութեան*

77. Հռոմէական ծիսամատեանին մէջ գտնուող Պսակի արարողութիւնը վերատեսուելու եւ ճոխացուելու է աւելի յստակօրէն նշելու համար խորհուրդին պարզեւած շնորհքը եւ աւելի շեշտուին պսակուողներուն պարտաւորութիւնները:

«Եթէ կարգ մը երկիրներու մէջ պսակի արարողութեան ընթացքին՝ կը կիրարկուին վաւերացումի արժանի ուրիշ սովորութիւններ եւ արարողութիւններ, Տիեզերական Ժողովս յոյժ կը ցանկայ որ անոնք ամբողջական պահպանուին» (41):

Ներկայ Սահմանադրութեան յօդուած 22,2-ով նշուած իրաւասութեան զօրութեամբ՝ կարելիութիւն տրուած է տեղւոյն եկեղեցական իշխանութեան մշակելու երկրին եւ ժողովուրդին սովորութիւններուն յարմարող ծիսակատարում մը, ըստ 63-րդ յօդուածին, սակայն բացայայտ պայմանով որ պսակող քահանան այս մասին պսակուողներուն հաւանութիւնը խնդրէ եւ ստանայ:

78. Պսակը սովորաբար կատարուելու է պատարագի ընթացքին, օրուայ Աւետարանին ընթերցումէն եւ քարոզէն ետք եւ «հաւատացեալներուն աղօթք»էն առաջ: Հարսին վրայ կատարուող աղօթքը բարեփոխուելով՝ նշելու է թէ պսակեալները հաւասար պարտաւորութիւնն ունին փոխադարձ հաւատարմութեան եւ ասիկա կարելի է ըսել տեղւոյն լեզուով:

Իսկ եթե Պսակը առանց Պատարագի կը կատարուի, Պատարագին ընթերցուածն ու Աւետարանը կարդացուելու են ծիսակատարումին սկիզբը, պսակեալներուն օրհնութիւնն ալ միշտ տրուելու է:

*Վերատեսութիւն խորհրդակերպերուն*

79. Խորհրդակերպերը վերատեսուելու են, առ այս իբր հիմնական կանոն նկատի առնելով հաւատացեալներուն արարողութիւններուն զիտակից, գործօն եւ հեշտ մասնակցութիւնը, նկատի առնելով հանդերձ այժմեան ժամանակներուն պահանջները: Խորհրդակերպերուն վերատեսութիւնը 63-րդ յօդուածին համեմատ կատարելու ատեն, կարելի է ըստ պահանջի նոր խորհրդակերպեր աւելցնել: Վերապահուած օրհնութիւնները թիով սահմանափակ ըլլալու են ու միայն ի նպաստ երիսկոպոսներուն եւ Վիճակաւորներուն: Նախատեսելու է կարգ մը խորհրդակերպեր, որոնք գէթ որոշ պարագաներուն եւ Վիճակաւորին հաւանութեամբ՝ կրնան մատակարարուիլ աշխարհականներու կողմէ որոնք պահանջուած յատկութիւններով օժտուած են:

*Կրօնաւորական ուխտը*

80. Հռոմէական ծիսարանին մէջ գտնուող Կոյսերու նուիրումին արարողութիւնը վերատեսութեան ենթարկելու է: Մշակուելու է նաեւ կրօնաւորական ուխտադրութեան եւ ուխտերու նորոգման ծիսակատարում մը, որ ունենայ առաւել միաձեւութիւն, զսպուածութիւն եւ յարգելիութիւն: Ան որդեգրուելու է անոնց կողմէ որ իրենց ուխտադրութիւնը կամ ուխտերուն նորոգումը պատարագի ընթացքին կը կատարեն, առանձնական իրաւասութիւնները պահպանելով հանդերձ:

Գովելի է կրօնաւորական ուխտը Պատարագի ատեն կատարել:

*Վերատեսութիւն թաղման արարողութեան*

81. Թաղման կարգը՝ քրիստոնեայ մահուան զատկական նկարագիրը աւելի յստակ կերպով արտայայտելու է եւ աւելի պատշաճելու է շրջանին կացութիւններուն եւ աւանդութիւններուն, նոյնիսկ ծիսական գոյնին առնչութեամբ:

82. Փոքրիկներու թաղման կարգը վերատեսութեան ենթարկուելու է եւ յատուկ Պատարագով մը օժտելու է:

#### ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

#### ԺԱՄԱՍԱՅՈՒԹԻՒՆԸ

*Ժամասացութիւնը՝ արարքը Քրիստոսի եւ Եկեղեցիին*

83. Յիսուս Քրիստոս, Նոր ու Յաւիտենական Ուխտի Քահանայապետը, երբ մարդկային բնութիւնը ստանձնեց, մեր երկրաւոր արքային մէջ ներմուծեց երկնային բնակարաններուն մէջ յաւիտեանս հնչող օրհներգը: Մարդոց համայն հասարակութիւնը իրեն միացնելով՝ զայն այս երկնային գովերգութեան մասնակից կը դարձնէ:

Ան կը շարունակէ քահանայական այս պաշտօնը կատարել իր Եկեղեցիին միջոցով, որ սուրբ Հաղորդութեան մատուցումով, ինչպէս նաեւ այլ միջոցներով եւ յատկապէս ժամասացութեան կատարումով, անդադար կը գովաբանէ Տէրը եւ կը բարեխօսէ համայն Աշխարհի փրկութեան համար:

84. Ըստ քրիստոնէայ հնամենի աւանդութեան՝ ժամասացութիւնը կազմուած է այնպիսի ձեւով, որ ամբողջ օրը գիշեր-ցերեկով նուիրուած ըլլայ Աստուծոյ գովաբանութեան: Երբ այս զմայլելի գովերգութիւնը ըստ կանոնի կատարուի քահանաներուն կամ Եկեղեցւոյ հաստատութեան կողմէ առ այս նշանակուած ուրիշ անձերու միջոցով, կամ քահանային հետ օրինաւորապէս աղօթող հաւատացեալներուն կողմէ, այն ատեն նոյնինքն Հարսին ձայնն է որ կ'ուղղուի Փեսային, նա մանաւանդ՝ Քրիստոս է որ իր աղօթքը միացնելով իր Մարմինին՝ կը ներկայացնէ Հօր:

85. Հետեւաբար, բոլոր անոնք, որ այս պաշտամունքը կը ստանձնեն, Եկեղեցիին պաշտօնն է որ կը կատարեն, միանգամայն կը մասնակցին Քրիստոսի Հարսին գերազանց պատիւին, որովհետեւ անոնք, աստուածային այս գովաբանութիւնը մատուցանելու համար՝ կը կանգնին Աստուծոյ գահին դիմաց, յանուն Մայր Եկեղեցիին:

*Ժամասացութեան հովուական արժէքը*

86. Հովուական առաքելութեան նուիրեալ քահանաները Ժամասացութեան գովաբանութիւնները այնքան աւելի մեծ եռանդով պիտի կատարեն, որքանով որ խորապէս գիտակցին թէ իրենք կը գործադրեն սուրբ Պօղոսի հետեւեալ յորդորը. «Անդադար աղօթեցէ՛ք (1 Թես 5, 17): Որովհետեւ միայն Տէ՛րը կրնայ ապահովել անոնց ստանձնած գործին արդիւնաւորումն ու յառաջդիմութիւնը. «Առանց ինծի ոչի՛նչ կրնաք ընել» (Յով 15, 5): Այս պատճառով Առաքեալները սարկաւագութիւնը կարգեցին, ըսելով. «Իսկ մենք կը մնանք հաւատարիմ աղօթքի եւ Խօսքի ծառայութեան» (Գործք 6, 4):

*Վերատեսութիւն Ժամասացութեան աւանդական կատարումին*

87. Ժամասացութեան նպատակը օրուան սրբացումն ըլլալով՝ անոր աւանդական կատարումն ալ վերատեսուելու է ա՛յնպիսի ձեւով, որ Ժամերը կարելիին չափով իրենց իսկական ժամանակամիջոցին աղօթուին, նկատի առնելով նաեւ ներկայ կեանքին պայմանները, յատկապէս առաքելական գործին նուիրուած անձերուն համար:

89. Ուստի ժամասացութիւնը վերատեսուելու միջոցին՝ հետեւեալ կէտերը նկատի առնուելու են.

ա) Ըստ Տիեզերական Եկեղեցիին վաղեմի աւանդութեան՝ ամէնօրեայ ժամասացութեան երկու բեւեռները կազմող առաւօտեան եւ երեկոյեան ժամասացութիւնները նկատուելու են որպէս գլխաւոր ժամերը եւ իբր այդ եւս աղօթուելու են:

բ) Հանգստեան ժամը այնպիսի ձեւով դասաւորուելու է, որ համընկնի օրուան աւարտին հետ:

գ) Գիշերային (Matines) ժամը, նոյնիսկ եթէ իր երգերուն մեջ գիշերային գովաբանական շեշտը կը պահպանէ, յարմարցուելու է ձեւով մը՝ որ աղօթուի օրուան որեւէ մէկ ժամուն եւ ճոխացուելու է աւելի մեծաթիւ սաղմոսներով եւ ընթերցումներով:

դ) Արշալոյսի ժամը (Prime) ջնջուելու է:

ե) Երբորդ, Վեցերորդ եւ Իններորդ ժամերը պահպանուելու են իբր խմբական աղօթք, իսկ առանձնապէս աղօթուելու պարագային՝ այս երեք ժամերուն մեջէն կարելի է ընտրել այն որ աւելի կը յարմարի օրուայ պահուն:

*Ժամասացութիւնը՝ աղբիւր բարեպաշտութեան*

90. Եւ քանի որ Ժամասացութիւնը, որպէս Եկեղեցւոյ հասարակաց աղօթք՝ աղբիւր եւ սնունդ է առանձնական աղօթքին, ուստի Տիրոջ անունով կը խնդրուի քահանաներէն ու Ժամասացութեան մասնակցողներէն, որ աղօթելու պահուն իրենց ձայները ներդաշնակեն իրենց սրտերուն հետ եւ առ այս, աւելի յաջողելու համար՝ իրենց գիտութիւնը աւելի՛ զարգացնեն ծիսակատարումին եւ Սուրբ Գիրքին եւ յատկապէս սաղմոսներու մասին:

Այս վերանորոգումը կատարելու ատեն՝ հռոմէական հնադարեան պատկառելի ծիսակատարումը յարմարցուելու է այնպիսի՝ կերպով, որ մարդիկը, որոնց ան յանձնուած է, կարենան աւելի լայնօրէն եւ հեշտօրէն օգուտ քաղել անկէ:

#### *Սաղմոսներու դասաւորումը*

91. Որպէսզի 89-րդ յօդուածով առաջարկուաթ Ժամերու շարքը կարելի ըլլայ պահպանել՝ սաղմոսները դասաւորուելու են ո՛չ թէ շարքուայ մը տարածքով, այլ աւելի երկար Ժամանակամիջոցի մը վրայ:

Սաղմոսարանին վերատեսութեան յաջողապէս նախաձեռնուած աշխատանքը իր աւարտին հասնելու է կարելի չափով շուտ, նկատի առած՝ լատին քրիստոնէութիւնը, անոր ծիսական գործածութիւնը ինչպէս նաեւ անոր երգեցողութիւնը եւ լատին Եկեղեցւոյ համայն աւանդութիւնը:

#### *Ընթերցումներուն կազմակերպումը*

92. Ընթերցումներուն վերաբերեալ՝ հետեւեալը նկատի առնուելու է.  
ա - Սուրբ Գիրքին ընթերցումը կազմակերպուելու է այնպիսի ձեւով, որ կարելի ըլլայ մերձենալ աստուածային խօսքին գանձերուն աւելի հեշտօրէն եւ աւելի լայն չափով:

բ - Աւելի լաւ ընտրուելու են Հայրերէն, Վարդապետներէն եւ եկեղեցական հեղինակներէն քաղուած ընթերցումները:

գ - «Վարք սրբոց»ները ներկայացուելու են պատմական ճշմարտութեան հետ ներդաշնակ:

#### *Օրհներգերու վերատեսութիւնը*



93. Օրհներգերը կարելի է չափով վերադարձուելու են իրենց նախկին ձևին, անոնցմէ ջնջելով կամ փոխելով ինչ որ կրնայ առասպել թուիլ կամ քրիստոնեայ բարեպաշտութեան հետ խորթ ըլլալ: Ուրիշ օրհներգեր եւս ըստ պահանջի ընդունուելու են՝ զանոնք քաղելով օրհներգերու զանձերէն:

*Ժամասացութիւնը աղօթելու պահը*

94. Օրը իսկապէս սրբացնելու, ինչպէս նաեւ Ժամասացութենէն հոգեւոր պտուղ քաղելու համար՝ հարկ է զայն աղօթել յարգելով իւրաքանչիւր Ժամին ամենամօտիկ պահը:

*Ժամասացութեան պարտաւորութիւնը*

95. Վանական հասարակութիւնները, վանական Պատարագէն զատ՝ պարտին նաեւ ամէն օր հասարակութեամբ կատարել՝

ա - Ամբողջ Ժամասացութիւնը. զայն խմբովին աղօթելու պարտաւոր են կանոնիկոսներու, կրօնաւոր-կրօնաւորուհիներու եւ այլ կարգերու հասարակութիւնները՝ ըստ կանոնին, կամ իրենց սահմանադրութեան զօրութեամբ:

բ - Իսկ աթոռանիստ եկեղեցիներու կանոնիկոսները պարտին Ժամասացութենէն ա՛յն մասերը աղօթել, որոնց պարտաւոր են ընդհանուր կամ յատուկ կանոնի զօրութեամբ:

գ - Բայց հասարակութիւններուն աւագ կարգերը ստացած կամ իրենց ուխտը կատարած անդամները, բացի եղբայրներէն, երբ չեն կրցած իրենց աղօթքը հաւաքաբար կատարել, պարտին զայն անհատաբար կատարել:

96. Եկեղեցական դասէն ազատ եւ աւագ Կարգերը ստացած կղերականները պարտաւոր են ամէն օր ամբողջ Ժամասացութիւնը հաւաքաբար թէ անհատաբար աղօթել, ըստ 89-րդ յօդուածին տրամադրութեան:

97. Ժամասացութիւնը ուրիշ ծիսակատարումով փոխանակելը որոշուելու է խորագիրներուն մէջ (ծանօթագրումով rubrique): Յատուկ պարագաներուն եւ արդարացուցիչ պատճառներով՝ Վիճակաւորները կրնան իրենց ենթակաները Ժամասացութենէն մասամբ կամ լրիւ զերծ կացուցանել եւ կամ զայն այլ կերպ փոխանակել:

98. Կատարելության ձգտող որեւէ հաստատության մը անդամները, որոնք իրենց Սահմանադրության զօրութեամբ՝ Ժամասացութենէն որեւէ մէկ մասը կ'աղօթեն, Եկեղեցոյ հասարակական աղօթքն է որ կը կատարեն:

Նոյնպէս Եկեղեցոյ հասարակական աղօթքը կը կատարեն անոնք որ իրենց Սահմանադրության զօրութեամբ՝ համառօտ Ժամասացութիւն մը կ'աղօթեն, պայմանաւ որ ան Ժամասացութեան նման կազմուած եւ օրինապէս վաւերացուած ըլլայ:

#### *Հասարակաց աղօթքը*

99. Քանի որ Ժամասացութիւնը Եկեղեցիին ձայնն է, այսինքն՝ ամբողջ խորհրդական Սարմնին կողմէ Աստուծոյ ուղղուած հաւաքական գովաբանութիւնը, յանձնարարելի է, որ նոյնիսկ հասարակական կեանքէն զերծ կղերականներն ու յատկապէս հաւաքական կեանք ապրող կամ մերթ ընդ մերթ խմբուող քահանաները, Ժամասացութեան գէթ մէկ մասը խմբովին կատարեն:

Իսկ Ժամասացութիւնը խմբովին թէ դասին մէջ կատարողները՝ իրենց յանձնուած այս պարտականութիւնը կատարելու են որքան կարելի է կատարեալ կերպով, թէ՛ ներքին բարեպաշտութեամբ, թէ՛ արտաքին կարգապահութեամբ:

Կարեւոր է նաեւ ըստ պատշաճի, որ երգուի հասարակութեամբ կամ դասի մէջ կատարուող Ժամասացութիւնը:

#### *Հաւատացեալներուն մասնակցութիւնը*

100. Հովիւները հսկելու են, որ կիրակի եւ տօնի օրերը՝ Ժամասացութեան գլխաւոր Ժամերը եկեղեցոյ մէջ միասնաբար կատարուին, յատկապէս Երեկոյեանը: Կը յանձնարարուի նաեւ աշխարհականներուն, որ Ժամասացութեան իրենք ալ մասնակցին, ըլլա՛յ քահանաներուն հետ, ըլլայ նաեւ երբ միատեղ կը հաւաքուին, նոյնիսկ իւրաքանչիւրը անհատաբար:

#### *Լեզուն*

101. 1) Կղերականները, պահպանելով ժամասացութեան լատին ծիսակատարումին դարաւոր աւանդութիւնը, պահպանելու են լատին լեզուն, սակայն անհատական պարագաներու համար՝ տեղոյն Վիճակաւորին իշխանութիւն տրուած է թոյլատրելու, որ գործածեն ժամասացութեան տեղական լեզուով թարգմանութիւնը, կատարուած՝ յօդուած 36-ի համեմատ, նոյնը թոյլատրուելու է նաեւ այն կղերականներուն, որոնց լատիներէն չգիտնալը՝ կրնայ լուրջ արգելք հանդիսանալ ժամասացութեան պատշաճ կատարումին:

2) Իսկ կրօնաւորուիներուն, ինչպէս նաեւ կատարելագոյն կեանքի ձգտող հաստատութիւններուն աշխարհական այր թէ կին անդամներուն պարագային, պատասխանատու մեծաւորը կրնայ թոյլ տալ, որ ժամասացութիւնը, նոյնիսկ անոր երգեցիկ մասը, երկրին լեզուով կատարեն, պայմանով որ անոր թարգմանութիւնը վաւերացուած ըլլայ:

3) Ժամասացութիւնը կատարելու պարտաւոր ռեւէ կղերական, երբ զայն երկրին լեզուով կը կատարէ՝ ընկերակցութեամբ հաւատացեալներու խումբի մը կամ մասնակցութեամբ 2)-ին մեջ յիշուած անձերուն, իր պարտականութիւնը կատարած կ'ըլլայ, պայմանաւ որ թարգմանութեան բնագիրը վաւերացուած ըլլայ:

## ԳԼՈՒԽ ՉԻՆԳԵՐՈՐԴ

### ԾԻՍԱԿԱՆ ՏԱՐԻՆ

#### *Ծիսական տարիի նշանակութիւնը*

102. Մեր մայրը սուրբ Եկեղեցին կը համարի թէ իրեն կը պատկանի իր երկնաւոր Փեսային փրկագործութիւնը սրբազան հանդիսութեամբ յուշակատարել սահմանուած օրերուն եւ ամբողջ տարուան ընթացքին: Եւ շաբաթը անգամ մը՝ «Տիրոջ օր» կոչած կիրակի օրը՝ Տիրոջ յարութիւնը կը յիշատակէ, նոյնը նաեւ տարին անգամ մը՝ սուրբ Զատիկը մեծաշուք հանդիսաւորութեամբ կը տօնէ, միատեղ յիշատակելով նաեւ անոր երանաւետ չարչարանքները:

Սուրբ Եկեղեցին, այսպէս՝ Քրիստոսի ամբողջ խորհուրդը կը տարածէ լման տարուան վրայ՝ Ծնունդէն մինչեւ Համբարձում,

մինչև Հոգեգալուստի օրը, մինչև Տիրոջ երանաւետ յոյսին եւ գալստեան ակնկալութիւնը:

Եկեղեցին Քրիստոսի խորհուրդը այս ձեւով ամբողջ տարին տօնակատարելով՝ հաւատացեալներուն առջեւ միանգամայն կը պարզէ իր Տիրոջ զօրութեան եւ արժանիքներուն գանձերը: Այսպէսով, այս խորհուրդները կերպով մը մշտակայ կը դառնան ժամանակին տեւողութեան, հաւատացեալներն ալ անոնց հետ շփման մէջ մնալով՝ փրկութեան շնորհքներով կը լիանան:

103. Սուրբ Եկեղեցին, Քրիստոսի խորհուրդներուն տօնակատարութիւնը ամբողջ տարուան վրայ տարածելէ ետք, իւրայատուկ սիրով կը մեծարէ նաեւ իր Որդիին փրկագործութեան անքակտելի զօդերով միացած Մարիամ Աստուածածինը: Եկեղեցին Մարիամի անձին մէջ սքանչացումով կը պանծացնէ փրկագործութեան գերազանց պտուղը եւ ուրախութեամբ կը սեւեռէ, իբր ամենաջինջ պատկերի մը ընդմէջէն՝ ինչ որ ինք եւս կը ցանկայ եւ կ'ակնկալէ ըլլալ:

104. Եկեղեցին իր ծիսական տարիին մէջ ներմուծած է նաեւ յիշատակումը մարտիրոսներուն եւ սուրբերուն, որոնք Աստուծոյ բազմապիսի շնորհքներով կատարելութեան հասան եւ յաւիտենական փրկութեան արդէն տիրացան, իսկ այժմ երկինքի մէջ Աստուծոյ կատարեալ գովաբանութիւն կը մատուցանեն եւ մեզի համար կը բարեխօսեն: Եկեղեցին, սուրբերու տարեդարձներուն՝ անոնց մէջ կը պանծացնէ զատկական խորհուրդը, սուրբեր՝ որոնք Քրիստոսի չարչարակից դառնալով՝ անոր հետ ալ փառաւորուեցան: Ահա թէ ինչու Եկեղեցին հաւատացեալներուն կը ծանօթացնէ անոնց բարի օրինակը, ինչ որ զիրենք կը մօտեցնէ Հօր՝ Քրիստոսով, ինչպէս նաեւ անոնց արդիւնքներով՝ Աստուծոյ բարիքները կը հայցէ:

105. Եւ վերջապէս, տարուան զանազան հանգրուաններուն եւ աւանդական բարեպաշտութեանց համեմատ՝ Եկեղեցին հաւատացեալները կը կազմաւորէ հոգեւոր եւ մարմնաւոր հրահանգներով, ուսուցումով, աղօթքով, ապաշխարանքի եւ եղբայրսիրութեան գործերով:

Այս պատճառով՝ Տիեզերական Ժողովը յարմար տեսաւ հետեւեալը սահմանել.

*Կիրակիի վերաբերումը*

106. Քրիստոսի յարութեան օրէն իսկ սկիզբ առած առաքելական աւանդութեան մը համաձայն՝ Եկեղեցին զատկական խորհուրդը կը տօնէ շաբթուան ուրբերորդ օրը, որ իրաւամբ կոչուած է Տիրոջ օր կամ կիրակի: Այդ օր՝ հաւատացեալները կանչուած են հաւաքուելու, որպէսզի Աստուծոյ Խօսքը լսելով եւ Հաղորդութեան մասնակցելով՝ յիշատակեն Տէր Յիսուսի չարչարուիլը, յարութիւնը առնելն ու փառաւորուիլը, հուսկ գոհութիւն մատուցանեն Աստուծոյ, որ զիրենք «վերստին ծնաւ կենդանի յոյսին, Յիսուսի Քրիստոսի յարութեամբ մեռելներէն» (1 Պետ 1, 3):

Կիրակին տօնական գլխաւոր օրն է, զոր հարկ է հաւատացեալներուն բացատրել եւ անոնց ջերմեռանդութեան մաս դարձնել, որ ան դառնայ ուրախութեան եւ աշխատանքէ զերծ օր: Միւս հանդիսութիւնները եթէ բացառիկ կարեւորութիւն չեն զգենուր, պէտք չէ կիրակիի տեղը գրաւեն, որ ամբողջ ծիսական տարիին հիմն ու կորիզն է:

*Վերատեսութիւն ծիսական տարիին*

107. Ծիսական տարին վերատեսուելու է այնպիսի ձեւով որ հին ժամանակներէն ժառանգուած աւանդական սովորութիւններն ու կարգապահութիւնները պահպանելով կամ վերադարձուելով, ինչպէս նաեւ մեր ժամանակի պայմաններուն հետ յարմարցուելով՝ անոնց սկզբնական նկարագիրը պահպանուի, որպէսզի այսպէս հաւատացեալներուն բարեպաշտութիւնը պատշաճօրէն սնանի քրիստոնէայ փրկագործութեան խորհուրդներուն եւ յատկապէս զատկական խորհուրդին տօնակատարութեամբ: Ընկերային պայմաններուն հետ անոնց յարմարեցումը, եթէ հարկաւոր նկատուի, զայն կատարել 39-րդ եւ 40-րդ յօդուածներուն համաձայն:

108. Հաւատացեալներուն ուշադրութիւնը ուղղուելու է նախ դէպի Տիրոջ տօները, որոնց միջոցով կը տօնակատարուին փրկութեան խորհուրդները տարուան ընթացքին: Իսկ մնացեալ ժամանակը յատկացուելու է փրկութեան խորհուրդներուն պատշաճ տօնակատարութեան, սուրբերու տօներէն առաջ, որպէսզի փրկութեան խորհուրդներուն ամբողջ շարքը տօնակատարուի պատշաճ կերպով:

*Քառասնորդացը կամ Մեծ Պահքը*

109. Քառասնորդաց շրջանը ունի զոյգ հանգամանք. ան՝ մեկ կողմէն հաւատացեալները ջերմօրէն կը յորդորէ Աստուծոյ Խօսքը լսելու եւ աղօթքի նուիրուելու, յատկապէս մկրտութեան վերապրումով կամ պատրաստութեամբ ու ապաշխարութեամբ, իսկ միւս կողմէն՝ զանոնք կը տրամադրէ զատկական խորհուրդը տօնելու: Այս զոյգ հանգամանքը որ կայ թէ՛ ծիսակատարումին եւ թէ՛ ծիսական քրիստոնէականի աւանդումին մէջ, պէտք է որ պատշաճօրէն լոյսի տակ դրուի:

Հետեւաբար՝

ա - Քառասնորդացի ծիսակատարումին այն տարրերը որ մկրտութեան կը հային, աւելի առատօրէն օգտագործուելու են, իսկ կարգ մը ուրիշներ՝ ըստ պատշաճի վերարժեւորուելու են, մեկնելով նախընթաց աւանդութենէն:

բ - Նոյնը ըսելու է նաեւ ապաշխարանքի հայոդ տարրերուն համար: Քրիստոնէականի ուսուցումին ընթացքին, հարկ է հաւատացեալներուն մտքին մէջ յեղյեղել մեղքին պատճառած ընկերային հետեւանքները եւ, ատոր հետ միասին, ապաշխարանքին յատուկ բնոյթը՝ որ մեղքին կ'ատէ, որովհետեւ նախատինք Աստուծոյ հանդէպ: Մոռցուելու չէ նաեւ Եկեղեցիին դերը ապաշխարանքի կատարումին մէջ, շեշտելով նաեւ մեղաւորներուն համար մատուցուած աղօթքը:

110. Քառասնորդաց շրջանի ապաշխարանքը ըլլալու չէ միայն ներքին ու անհատական, այլ նաեւ արտաքին եւ հասարակական: Ըստ մեր ժամանակին եւ զանազան շրջաններուն կարելիութիւններուն, ինչպէս նաեւ ըստ հաւատացեալներուն պայմաններուն՝ ապաշխարանքին գործադրումը քաջալերուելու եւ յանձնարարուելու է, յօդուած 22-ով նշուած իշխանութիւններուն կողմէ:

Սակայն Տիրոջ չարչարանաց եւ մահուան ուրբաթ օրուան զատկական պահքը՝ ամէն տեղ սրբութեամբ պահպանուելու է եւ ըստ յարմարութեան՝ երկարելու է նաեւ մինչեւ Աւագ Շաբաթ օր, որպէսզի կարելի ըլլայ մաքրուած սրտով մասնակցիլ Տիրոջ յարութեան ուրախութիւններուն:

### *Տօն սրբոց*

111. Աւանդութեան համեմատ՝ սուրբերը մեծարանքի առարկայ են Եկեղեցոյ մէջ, անոնց հարազատ մասունքներն ու պատկերներն ալ՝ յարգանքի արժանի: Սուրբերուն տօները հռչակումն են Քրիստոսի իր ծառաներուն մէջ կատարած սքանչելիքներուն, իսկ հաւատացեալներուն համար՝ կեանքի օրինակներ: Սակայն որպէսզի սուրբերուն տօնակատարութիւնը չգերազանցէ փրկագործութեան խորհուրդները մեծարող միւս տօները, անոնք մեծ մասամբ տօնուելու են իրենց ազգին, եկեղեցիին կամ կրօնական ընտանիքին ծոցին մէջ, իսկ տիեզերական Եկեղեցին յիշատակելու է միայն այն սուրբերը, որոնք իսկապէս ընդհանրական կարեւորութիւն կ'ընծայեն:

### ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

#### ՍՐԲԱԶԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

#### *Սրբազան երաժշտութեան արժանաւորութիւնը*

112. Տիեզերական Եկեղեցիին երաժշտական աւանդութիւնը անգնահատելի գանձ մըն է, որ կը գերազանցէ միւս արուեստները, յատկապէս որովհետեւ խօսքերու միացած սրբազան երաժշտութիւն ըլլալով՝ ան հանդիսաւոր ծիսակատարումի մաս կը կազմէ որպէս անոր անհրաժեշտ եւ ամբողջացուցիչ տարրը:

Սրբազան երգը պանծացուած է Սուրբ Գիրքին (42), ինչպէս նաեւ Հայրերուն եւ Սրբազան Պապերուն կողմէ, որոնք վերջին շրջանին՝ սուրբ Պիոս Ժ. Պապին օրինակին հետեւելով՝ աւելի մասնայատկօրէն լոյսի տակ դրին հոգեւոր երաժշտութեան ծիսական պաշտօնը սրբազան արարողութիւններուն ընթացքին:

Հետեւաբար սրբազան երաժշտութիւնը այնքանով աւելի սուրբ նկատուելու է, որքանով որ ծիսակատարումին հետ աւելի սերտ առնչութիւն ունի, աղօթքին հաղորդելով աւելի հաճելի արտայայտչութիւն, սրբազան արարողութիւններուն միաձեւութիւն կամ անոնց ծիսակատարումին աւելի հանդիսաւորութիւն: Եկեղեցին հարազատ արուեստի բոլոր արտայայտութիւններուն

կողքին կը կանգնի, զանոնք աստուածային պաշտամունքէն ներս ընկալելով որքանով որ անոնք օտուած են պահանջուած որակով:

Ուստի Տիեզերական Ժողովս՝ պահպանելով ասանդութեան եւ եկեղեցական կարգապահութեան չափանիշներն ու հրահանգները, սրբազան երաժշտութեան նպատակն ալ՝ Աստուծոյ փառքը եւ հաւատացեալներուն սրբացումը, հետեւեալը սահմանեց.

#### *Հանդիսաւոր ծիսակատարութիւնը*

113. Արարողութիւնները աւելի վեհաշուք կը դառնան, երբ հանդիսաւորապէս եւ երգեցողութեամբ կը կատարուին, երբ եկեղեցական ծառայողները անոնց կ'օժանդակեն ու հաւատացեալները իրենց գործօն մասնակցութիւնը կը բերեն: Իսկ ինչ կը վերաբերի գործածելիք լեզուին՝ յարգել յօդուած 36-ը, պատարագին՝ յօդուած 54-ը, խորհուրդներուն՝ յօդուած 63-ը, Ժամասացութեան՝ յօդուած 101-ը:

114. Հարկ է սրբազան երաժշտութեան զանձը պահպանել եւ մշակել մեծագոյն հոգածութեամբ: Երգչախումբերը յարատեւօրէն զարգացուելու են, մանաւանդ աթոռանիստ եկեղեցիներուն պարագային: Եպիսկոպոսներն ու հոգեւոր հովիւները փութով հսկելու են, որ երգեցողութեամբ կատարուող որեւէ արարողութեան մը միջոցին՝ ամբողջ հաւատացեալ ժողովուրդը կարենայ իր յատուկ գործօն մասնակցութիւնը բերել, ըստ 28 եւ 30 յօդուածներուն:

#### *Երաժշտական կազմաւորումը*

115. Մեծ կարեւորութիւն ընծայուելու է երաժշտութեան դասաւանդումին եւ գործածութեան՝ դպրեվանքերու, զոյգ սեռի կրօնաւորական ուսումնարաններու, ինչպէս նաեւ անոնց կաթողիկէ այլազան հաստատութիւններու եւ վարժարաններու մէջ: Այս դաստիարակութիւնը ապահովելու համար՝ սրբազան երաժշտութիւն դասաւանդողները խնամքով կազմուելու են:

Կը յանձնարարուի նաեւ սրբազան երաժշտութեան ուսուցման բարձրագոյն հաստատութիւններ կանգնել, ուր որ յարմար է:



Երաժիշտներուն եւ երգիչներուն, յատկապէս փոքրերուն, տրուելու է նաեւ ծիսագիտական հարազատ կազմաւորում:

*Գրիգորեան երգ եւ բազմաձայն երգեցողութիւն*

116. Եկեղեցին Գրիգորեան երգին մէջ կը ճանչնայ հոռմեական ծիսակատարումին հարազատ երգը: Հետեւաբար՝ ծիսակատարումներուն ընթացքին գլխաւոր տեղը ա՛ն գրաւելու է, մնացեալը իրեն հաւասար պահպանելով:

Սրբազան երաժշտութեան միւս սեռերը, յատկապէս բազմաձայն երգեցողութիւնը, դուրս դրուելու չեն սրբազան արարողութիւններէն, պայմանաւ, որ անոնք ներդաշնակ ըլլան ծիսակատարումին հոգիին հետ, 30-րդ յօդուածին համաձայն:

117. Աւարտելու է Գրիգորեան երգարանին տիպար տպագրութիւնը, պատրաստելու է նաեւ աւելի քննական տպագրութիւն մը ա՛յն հրատարակուած գործերուն, որոնք լոյս տեսան սուրբ Պիոս Թ. Պապի կատարած վերանորոգումներէն ետք: Յարմար է որ փոքր եկեղեցիներուն համար աւելի պարզ եղանակներով հրատարակութիւն մըն ալ պատրաստուի:

*Ժողովրդային հոգեւոր երգը*

118. Ժողովրդային հոգեւոր երգը քաջալերելու է տրամաբանական ձեւով՝ որպէսզի ըլլայ ջերմեռանդական թէ՛ ծիսական արարողութիւններուն միջոցին՝ հաւատացեալներուն ձայնը լսելի ըլլայ, ըստ խորագիրներուն նշած չափանիշներուն եւ յանձնարարութիւններուն:

*Սրբազան երաժշտութիւնը՝ առաքելավայրերուն մէջ*

119. Որոշ երկիրներուն եւ յատկապէս առաքելավայրերուն մէջ ժողովուրդներ կան, որոնք տէր են սեփական երաժշտական աւանդութեան մը, որ մեծ տեղ կը գրաւէ անոնց կրօնական եւ ընկերային կեանքէն ներս: Ուստի հարկ է անոր կարեւորութիւն ու պատշաճ տեղ ընծայել, միանգամայն կրթել անոնց կրօնական զգացումը, իսկ պաշտամունքը պատշաճեցնել անոնց հոգեբանութեան, ըստ 39-րդ եւ 40-րդ յօդուածներուն տրամադրութեան:

Այս պատճառով՝ միսինսարական երաժշտական կազմաւորումին միջոցին՝ խնամքով հսկելու է, որ անոնք կարելիին չափով աստակ ըլլան զարկ տալու այդ ժողովուրդներուն տոհմիկ երաժշտութեան՝ դպրոցէն ներս թէ սրբազան արարողութիւններուն միջոցին:

*Երգեհոնը եւ միւս նուագարանները*

120. Լատին Եկեղեցիէն ներս՝ մեծապէս արժեւորելու է երգեհոնը, որպէս աւանդական նուագարան, որուն հնչեղութիւնը կրնայ Եկեղեցւոյ արարողութիւններուն սքանչելի փայլք մը աւելցնել, հոգիներուն ալ նպաստել դէպի Աստուած եւ երկինք սլանալու:

Իսկ միւս նուագարաններուն գործածութիւնը հոգեւոր պաշտամունքին ատեն՝ թոյլատրելի է տեղական պատկան իշխանութեան դատումին եւ որոշումին համեմատ եւ ըստ 22-րդ, 36-րդ եւ 40-րդ յօդուածներուն, պայմանաւ որ յարմար ըլլան կամ կարենան յարմարիլ հոգեւոր կիրարկումին, պատշաճին աղօթատեղիին սրբութեան եւ իսկապէս աստակ ըլլան՝ նպաստելու հաւատացեալներուն ջերմեռանդութեան:

*Երաժշտագէտներուն առաքելութիւնը*

121. Քրիստոնէական շունչով թրծուած երաժշտագէտները հասկնալու են, որ իրենք կանչուած են սրբազան երաժշտութիւնը մշակելու եւ անոր գանձերը աճեցնելու:

Անոնք յօրինելու են հարազատ սրբազան երաժշտութեան դրոշմը կրող եղանակներ, որոնք կարելիութիւնն ունենան երգուելու ո՛չ միայն մեծ երգչախումբերու կողմէ, այլ նաեւ մատչելի ըլլան փոքր երգչախումբերու եւ օժանդակէն հաւատացեալ համայն ժողովուրդին գործօն մասնակցութեան:

Հոգեւոր երգերուն բառերը համերաշխ ըլլալու են կաթողիկէ վարդապետութեան հետ եւ նախընտրաբար քաղուած՝ Սուրբ Գիրքէն եւ ծիսական աղբիւրներէն:

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ  
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ ԵՒ ՊԱՇՏԱՄՈՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ

### *Սրբազան արուեստին մեծվայելչությունը*

122. Գեղարուեստները եւ յատկապէս հոգեւոր արուեստը եւ անոր գագաթնակէտ հանդիսացող՝ սրբազան արուեստը, կը պատկանին մարդկային մտքին ազնուագոյն գործունէութիւններուն: Անոնք ինքնին կը ձգտին մարդոց գործերուն մէջէն՝ կերպով մը արտայայտելու Աստուծոյ անսահման գեղեցկութիւնը եւ Անոր գովքն ու փառքը հիւսելու: Անոնք ա՛յնքանով կը ծառայեն Աստուծոյ գովքն ու փառքը ճոխացնելու, որքանով որ իրենց գործերով, ուրիշ նպատակ չունին եթէ ոչ մարդոց հոգիները կարելիին չափով դէպի Աստուած ուղղել:

Այսպէս է, որ Մայր Եկեղեցին գեղարուեստին մնայուն բարեկամը հանդիսացած է եւ անդադրուն դիմած է անոր ազնուական ծառայութեան, յատկապէս պաշտամունքին առարկաները դարձնելու համար ընտիր, ներդաշնակ ու գեղեցիկ, եւ այսպէս՝ նշելու եւ խորհրդանշելու համար անդրերկրային իրականութիւնները: Այս պատճառով՝ Մայր Եկեղեցին երբեք չէ դադրած նաեւ արուեստագէտներ պատրաստելէ: Ան միշտ վարուած է նաեւ որպէս գեղարուեստի դատաւոր, արուեստի մարդոց գործերուն մէջէն գատելով ինչ որ դաշն է հաւատքին, բարեպաշտութեան եւ կրօնքին աւանդական օրէնքներուն հետ եւ բարեպաշտ գործածումի պիտանի:

Եկեղեցին յատուկ փութով հսկած է, որ սրբազան առարկաները պատշաճ ու գեղեցիկ կերպով ծառայեն պաշտամունքին պայծառութեան, միանգամայն ընթացք տալով շինանիւթի եւ զարդարուեստի վերաբերեալ դարերու ընթացքին յաջառդիմող թէքնիքին ներմուծած փոփոխումներուն:

Ուստի Հայրերը որոշեցին այս նիւթերուն մասին հետեւեալը սահմանել:

### *Գեղարուեստական ոճերը*

123. Եկեղեցին գեղարուեստի ոճերէն ո՛չ մէկը իրեն յատուկ չէ նկատած, այլ ըստ ժողովուրդներուն նկարագրին եւ կեցութեան պայմաններուն եւ ըստ զանազան ծէսերուն պահանջներուն՝ ան ընկալած է իւրաքանչիւր ժամանակին զանազան ոճերը եւ դարերու

ընթացքին գեղարուեստական գանձեր արտադրած եւ զանոնք ամենայն զգուշութեամբ պահպանած է: Ժամանակակից եւ բոլոր երկիրներու եւ ժողովուրդներու արուեստները Եկեղեցւոյ ծոցին մէջ գործելու ազատութիւնն ունին, պայմանաւ որ անոնք ծառայեն սրբազան վայրերուն ու ծիսակատարումներուն պատշաճ յարգանքով եւ պատիւով եւ այնպէսով՝ ատակ դառնան իրենց ձայնը միացնելու այն փառքի սքանչելի համերգին, զոր մեծահոջակ մարդիկ դարերու ընթացքին հնչեցուցած են ի մեծարանս կաթողիկէ հաւատքին:

124. Վիճակաւորները հսկելու են, որ մինչ իսկական սրբազան արուեստին զարկ կու տան եւ կ'օժանդակեն, նկատի ունենան վսեմ գեղեցկութիւնը քան թէ միայն շքեղութիւնը: Նոյնը կը վերաբերի նաեւ սրբազան զգեստներուն եւ զարդեղէններուն:

Եպիսկոպոսները հսկելու են նաեւ, որ Աստուծոյ տուներէն եւ այլ սրբատեղիներէն զգուշութեամբ հեռացուին գեղարուեստի այն գործերը, որոնք անհաշտ են հաւատքին, բարքերուն ու քրիստոնէայ բարեպաշտութեան հետ եւ կը վիրաւորեն մարդոց կրօնական հարազատ զգացումը՝ իրենց արուեստին այլանդակ կերպարանքով, միջակութեամբ կամ սնտոխութեամբ:

Եկեղեցական կառուցումներուն պարագային՝ զգուշութեամբ հսկելու է, որ անոնք յարմարին ծիսական արարողութիւններուն կատարումին եւ նպաստեն հաւատացեալներուն գործօն մասնակցութեան:

#### *Սրբազան պատկերները*

125. Եկեղեցիներուն մէջ՝ հաւատացեալներուն ջերմեռանդութեան սրբազան պատկերներ ընծայելու սովորոյթը հաստատ պահպանուելու է, սակայն անոնք ըլլալու են սահմանափակ թիւով ու յարմար դասաւորումով, որպէսզի քրիստոնէայ ժողովուրդին զարմանք չպատճառեն եւ շեղած բարեպաշտութիւն մը չստեղծեն:

126. Գեղարուեստի գործ մը դատելու համար՝ տեղւոյն Վիճակաւորները սրբազան արուեստի թեմական Յանձնախումբին եւ ի պահանջել յարկին՝ այլ մասնագէտներու խորհուրդը հարցնելու են, ինչպէս նաեւ 44-րդ, 45-րդ, 46-րդ յօդուածներով նշուած յանձնախումբերուն:

Վիճակաւորները զգուշութեամբ հսկելու են, որ սրբազան կարասիները կամ Աստուծոյ տան որպէս զարդ ծառայող արժէքաւոր առարկաները չհրապարակուին կամ չփճացուին:

*Արուեստագէտներուն կազմաւորումը*

127. Եպիսկոպոսները անձամբ կամ մասնագիտացած ու գեղարուեստի սիրով օժտուած որակեալ քահանաներուն միջոցով, զբաղուելու են արուեստագէտ մարդոցմով, զանոնք սրբազան արուեստին եւ ծիսակատարումին ոգիով թրծելու համար:

Առաւել՝ արուեստի մարդոց կազմաւորումին համար՝ կը յանձնարարուի յարմար շրջաններուն մէջ բանալ սրբազան արուեստի դպրոցներ կամ կաճառներ:

Բայց գեղարուեստի բոլոր այն մարդիկը, որ իրենց ձիրքերէն առաջնորդուած՝ կը ցանկան սուրբ Եկեղեցիին ծոցին մէջ Աստուծոյ փառքին ծառայել, միշտ յիշելու են թէ իրենք, կերպով մը՝ իրենց արարիչ Աստուծոյ օրինակին հոգեպէս կը հետեւին եւ թէ կաթողիկէ պաշտամունքին ծառայող գործեր ստեղծելով՝ հաւատացեալները բարեպաշտութեան եւ հոգեւոր կեանքին կը տրամադրեն:

*Վերատեսութիւն սրբազան արուեստի կանոններուն*

128. Եկեղեցական կանոններն ու սահմանադրութիւնները, որոնք կը հային աստուածային պաշտամունքի ու յատկապէս շէնքերուն կառոյցին լուրջ ու յարմար ըլլալուն, խորաններուն ձեւին ու շինուածքին, Հաղորդութեան տապանակին պատուաւոր դիրքին ու ապահովութեան, մկրտարանին յարմար վայրին ու պատշաճութեան, ինչպէս նաեւ սուրբ նկարներուն ներդաշնակ դասաւորումին, զարդին ու զարդարանքին, այս ամէնը ընդ փոյթ վերատեսուելու են 25-րդ յօդուածին համաձայն եւ ծիսակատարումին վերանորոգումին հետ անյարիւր եղող ամէն ինչ փոխուելու կամ ջնջուելու է եւ ընդհակառակը՝ պահպանուելու կամ ներմուծուելու է ինչ որ անոր կը նպաստէ:

Այս մարզին մէջ եւ յատկապէս այն ինչ որ կը վերաբերի սրբազան կարասիներուն եւ զգեստներուն նիւթին ու ձեւին, եպիսկոպոսական տեղական համագումարներուն իշխանութեան

տրուած է յարմարեցումներ կատարելու տեղոյն կարիքներէն եւ բարքերէն ներս, ըստ ներկայ Սահմանադրութեան 22-րդ յօդուածին:

*Կղերականներուն զեղարուեստական կազմաւորումը*

129. Կղերականները իրենց փիլիսոփայական եւ աստուածաբանական դասընթացքներուն միջոցին՝ ուսանելու են նաեւ սրբազան արուեստի պատմութիւնն ու անոր կատարած նուաճումները, ինչպէս նաեւ այն նուիրական սկզբունքները, որոնց վրայ հիմնուելու են սրբազան արուեստի գործերը, որպէսզի արժեւորեն եւ պահպանեն Եկեղեցւոյ հնամենի յուշակոթողները եւ կարենան արուեստագէտներուն դիպուկ ցուցմունքներ կատարել իրենց արուեստի իրագործումներուն վերաբերեալ:

*Քահանայապետական պատուանշանները*

130. Քահանայապետական պատուանշաններուն գործածութիւնը վերապահուելու է եպիսկոպոսական հանգամանք կամ առանձնայատուկ իրաւասութիւն վայելող եկեղեցական անձնաւորութիւններուն:

ԿՑՈՐԴ

**Յայտարարութիւն  
Վատիկանեան Բ. Ժողովին  
տօնացոյցի վերատեսութեան մասին**

Վատիկանեան Բ. Տիեզերական Ժողովն՝ յոյժ կարեւոր համարելով շատերուն ներկայացուցած փափաքը՝ սուրբ Չատիկը տօնելու սահմանուած կիրակի մը եւ մնայուն տօնացոյց մը կազմելու, ուշի ուշով կշռելէ ետք նոր տօնացոյցի մը որդեգրումին կարելի հետեւանքները, հետեւեալը կը յայտարարէ.

1. Տիեզերական Ժողովը դէմ չէ գրիգորեան տօնացոյցին մէջ Չատիկը սահմանուած կիրակի մը տօնակատարելու, հաւանութեամբ անոնց, որոնց համար այս հարցը կարեւոր է եւ յատկապէս սուրբ Աթոռին միութենէն բաժանեալ եղբայրներուն:

2. Տիեզերական Ժողովը կը յայտարարէ, թէ դէմ չէ նաեւ այն ծրագիրներուն, որոնք կը ձգտին մշտնջենաւոր տօնացոյց մը ներմուծելու քաղաքային ընկերութեան մէջ:

Բայց մնայուն տօնացոյց մը կազմելու եւ զայն քաղաքային ընկերութեան մէջ ներմուծելու համար երեւակայուած զանազան դրութիւններուն մէջէն՝ Եկեղեցին դէմ չէ միայն անոնց, որոնք կը պահեն ու կը պահպանեն եօթնօրեայ շաբաթ մը՝ կիրակիով հանդերձ, առանց շաբթուան մէջ ուրիշ օր ներմուծելու, այնպէս որ յաջորդականութիւնը անաղարտ պահպանուի, բացի եթէ միջամտեն շատ ծանր պատճառներ, որոնց մասին սուրբ Աթոռը իր դատումը տալու է:

Այս Սահմանադրութեամբ սահմանուած բոլոր եւ իւրաքանչիւր կէտերը հաճոյ թուեցան Տիեզերական Ժողովի Հայրերուն: Եւ Մենք՝ Քրիստոսէն ստացած Մեր առաքելական իշխանութեամբ եւ միասնաբար մեծայարգ Հայրերուն հետ՝ զանոնք կը հաստատենք, կ'որոշենք եւ կը սահմանենք Սուրբ Հոգիիին լոյսին ներքեւ, եւ կը հրահանգենք, որ ի փա՛ռս Աստուծոյ՝ հոշակուի ինչ որ հաստատուեցաւ Տիեզերական Ժողովով:

Հռոմ, ի Սուրբ Պետրոսն, 4 Դեկտեմբեր 1963  
Եւ՝ Պօղոս,  
Եպիսկոպոս կաթողիկէ Եկեղեցոյ

## Ծանոթագրութիւններ

- 1- Ծածուկ աղօթք իններորդ կիրակիի յետ Պենտեկոստէի
- 2- Եբր 13,14
- 3- Եփես 2, 21-22
- 4- Անդ 4, 13
- 5- Եսա 11, 12
- 6- Յվ 11, 52
- 7- Յվ 10,16
- 8- Ես 61, 1 - Ղկ 4, 14
- 9- St Ignace d'Antioche, *Ad Ephesios* 7,2. Ed. F.X. Funk, *Patres Apostolici I*, Tubingen, 1901. p. 218.
- 10- 1 Տիմ 2, 5
- 11- *Sacramentarium Veronense* (Leonianum); Mohlberg, Rome, 1956, n. 1265, p. 162.
- 12- Նախաբան Չատկի:
- 13- Oraison suivant la 2\* leçon du Samedi Saint, dans le missel romain, avant la réforme de la Semaine Sainte.
- 14- Մրկ 16, 15
- 15- Գործք 26, 18
- 16- Հռմ 6, 4 - Եփ 2, 6 - Կոր 3, 1 - 2 Տիմ 2, 11
- 17- Յվ 4, 23
- 18- 1 Կոր 11, 26
- 19- Conc. Trident. sess. 13, 11 Octobre 1551, *Décret Dess. Eucharist.* c.5; - Conc. Trident. *Diavorum, Actorum, Epistolarum, Tractatum nova collectio*, ed. Soc. Goerresiana, t.VII. *Actorum* pars IV, Fribourg-en-Brisgau, 1961, p. 202.
- 20- Conc. Trident. sess, 22, 17 septembre 1562, doct. *Dess. Missae sacrif.*, c. – Conc. Trident. ed. cit. , t. VIII. *Actorum* pars V, Fribourg-en-Brisgau, 1919, p. 960.
- 21- St Augustin, *In Io. Evang.* Tract. VI,1, 7; PL 35,1428.
- 22- Յայտ 21, 2 - Կոր 3, 1 - Եբր 8, 2
- 23- Փլպ 3, 20 - Կոր 3, 4
- 24 - Յվ 17, 3 - Ղկ 24, 27 - Գործք 2, 38
- 25- Մթ 28, 20
- 26- Postcommunion pour la Vigile et le dimanche de Pâques.
- 27- Oraison de la messe du mardi de Pâques.
- 28- 2 Կոր 6, 1
- 29- Մթ 6, 6



- 30- 1 Өту 5, 17
- 31- 1 Өту 5, 17 - 2 Чп 4, 10-11
- 32-Secrète du lundi de Pentecôte.
- 33-St Cyprien, *De cath. eccl. unitate*, 7: csel (Hartel) III, 1, p.215-216, - Cf. EpStre 66, n. 8, 3: ed. cit. III, 2, p. 732-733.
- 34- Cf. Conc. Trident. sess. 22, 17 septembre 1562, doct. Dess. *Missae sacrif.*, c. 8, – Conc. Trident. ed. cit. VIII. 961.
- 35- Cf. St. Ignace, *Ad Magn.* 7; ad Ph. 4; *Ad Smyrn.*, 8/ Funk I, 236, 266, 281.
- 36- Cf. St. Augustin, *In Io. Evang.* Tract. XXVI, VI, 13: PL 35, 1613.
- 37- Bréviaire romain, FUte du Corps du Christ, Vêpres II, antiph. du Magnificat.
- 38- Cf. Saint Cyrille d'Alex., *Comment. in Io. Evang.*, liv. XI, c. XI-XII : PG 74, 557-564
- 39- Cf. *1 Tm* 2, 1-2.
- 40- Sess. 21, 16 juillet 1562. *Doctrina de Communionem sub utraque specie et parvulorum*, c.1-3 : Conc. Trid., ed. cit., VIII, 698-699.
- 41- Conc. de Trente, sess. 24, 11 novembre 1563, *De reformatione*, chap. 1 : Conc. de Trente, ed. cit., IX *Actorum* pars VI, Fribourg-en-Brisgau, 1924, p. 969. – Cf. *Rituel romain*, tit. VIII, c. II, n.6.
- 42- Cf. *Ep* 5, 19 ; *Col* 3, 16.